Թեմատիկ պլանավորում

Հայոց լեզու -7-րդ դասարան

Տարեկան 102 ժամ

Շաբաթական 3 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Հովհ. Բարսեղյան, Փ. Մեյթիխանյան, տարեթիվ՝ 2016

Ուսուցիչ՝ Գրետա Հակոբյան

Նպատակ	.Զևավորել համակարգային մտածողություն, դասակարգելու, տարբերակելու կարողություն: .Զևավորել բառերն ըստ ընդհանուր հատկանիշների դասակարգելու կարողություն և խոսք կազմելու հմտություններ: .Ընդլայնել սովորողի իմացության շրջանակը: .Նպաստել խոսքում հատկանիշ ցույց տվող բառերի նպատակային և ճիշտ կիրառմանը: .Զարգացնել պատկերավոր խոսք: Զևավորել թվականի տեսակները խոսքում ճիշտ կիրառելու կարողություններ: .Նպաստել փաստարկված խոսք կազմելու մեջ թվականների արժևորմանը: Զևավորել դերանունների դերն ընկալելու, տեսակների դերը կարևորելու, ուղղակի և անուղղակի խոսքում ճիշտ կիրառելու հմտություններ: .Զևավորել տարբեր բնույթի նախադասություններում բայաձևերը ճիշտ կիրառելու, բայն իր բոլոր ձևերով խոսքի մեջ կիրառելու հմտություններ, ժամանակը ճիշտ պատկերացնելու և համապատասխան բայաձևերով արտահայտելու, ճիշտ և սխալ ձևերի տարբերակման կարողություն: .Զարգացնել հաղորդակցական հմտությունները:
Վերջնարդյունքներ	.Գրավոր խոսքի տարբեր տեսակներ կիրառի տարբեր նպատակների և լսարանների համար՝ պահպանելով գրագետ շարադրանքի (ուղղագրություն և կետադրություն, բառագործածություն, քերականություն) կանոնները, գրի հակիրճ շարադրանք և երկխոսություն: .Համագործակցի ընկերների հետ՝ փաստարկված պաշտպանելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը: .Կատարի ձևաբանական վերլուծություն և կազմի գրագետ խոսք: .Ճանաչի գոյականի, ածականի, թվականի, դերանվան, բայի քերականական հատկանիշները, տարբերակի և կիրառի խոսքում: Տարբերի խոսքի ոճերը, տեղադրի կամ փոփոխի համապատասխան բառապաշար: Զևափոխի (հոլով, հոդ, թիվ, խոնարհում) խոսքի մասերը կանոններին համապատասխան և

	ըստ անհրաժեշտության և ճիշտ ձևափոխություններով կիրառի խոսքում: .Գրավոր պատասխանի հարցերին՝ կատարելով անհրաժեշտ մեկնաբանություններ:

Թեմա		
Նախորդ դասարանում անցած նյութի կրկնություն	Վերհիշել անցած թեմաները	
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Ընդհանուր գիտելիք ձևաբանության վերաբերյալ	Սովորեցնել նյութական, քերականական, վերաբերմունքային բառերի իմաստային տարբերությունները:	Անգիր իմանա խոսքի մասերի անվանումները:
Բառի փոփոխությունը խոսքի մեջ, արմատ, հիմք, վերջավորություն	Իմանա և տարբերակի բառերի փոփոխությունը խոսքի մեջ:	Ճանաչի և տարբերակի բառերի արմատը, հիմքը և վերջավորությունը:
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Գոյականը որպես խոսքի մաս	.Նպաստել խոսքում առարկա ցույց տվող բառերի նպատակային և ճիշտ կիրառությանը: .Սովորեցնել տարբերակել գոյականի տեսակները, ձևային փոփոխությունների տարբերության ընկալումը:	.Տարբերակի հատուկ և հասարակ, անձնանիշ և իրանիշ գոյականները: .Տեքստից դուրս գրի եզակի թվով գոյականները, կազմի դրանց հոգնակին: .Բառերի ձևային փոփոխությունները հաշվի առնելով՝ որոշի տեքստից դուրս բերված գոյականների հոլովը: .Տարբերակի գոյականների առումներն ու հոդերի տեսակները:
Ժամ **Թեմատիկ պլանավորում**	**Էջ**	**Դաս**
12/1	17-18	Գոյականը որպես խոսքի մաս: Հատուկ և հասարակ գոյականներ
12/2	18-20	Բաղադրյալ հատուկ գոյականների ուղղագրությունը
12/3	21	Գոյականի տեսակները՝անձնանիշ և իրանիշ
12/4	22-25	Գոյականի թիվը,Հոգնակի թվի կազմությունն ու ուղղագրությունը: Անեզական և անհոգնական գոյականներ
12/5	26-27	Որոշյալ և անորոշ գոյականներ
12/6	27-29	Գոյականի հոլովները:Ուղղական հոլով
12/7	30-31	Սեռական հոլով

12/8	33	Տրական հոլով
12/9	34-35	Հայցական հոլով
12/10	36	Բացառական հոլով
12/11	37	Գործիական հոլով
12/12	38-39	Ներգոյական հոլով
Թեմայի ամփոփում		
Թեմատիկ գրավոր աշխատանք		
Ամրապնդող վարժություններ		
Թեմա Թեմատիկ պլանավորում	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Ածականը որպես խոսքի մաս	.Նպաստել խոսքում հատկանիշ ցույց տվող բառերի նպատակային և ճիշտ կիրառմանը:	.Ճանաչի հիմնական հատկանիշները: .Տարբերակի ածականի տեսակները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
4/1	42-43	Ածականը որպես խոսքի մաս
4/2	44	Ածականի տեսակները
4/3	46-47	Որակական ածականի համեմատության աստիճանները
4/4		Ածականի մակդիրային կիրառությունը, գործածությունը գոյականի հետ
Ամրապնդող վարժություններ ածականի վերաբերյալ		
Թեմատիկ գրավոր աշխատանք		
Թեմա Թեմատիկ պլանավորում	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Թվականը որպես խոսքի մաս	.Զևավորել թվականի տեսակները խոսքում ճիշտ կիրառելու կարողություններ:	.Անսխալ գրի և արտասանի թվականները: .Տարբերակի թիվ, թվային կարգ, քանակ, թվանշան հասկացությունները:
Ժամ	**Էջ**	**Դաս**
7/1	51	Թվականը որպես խոսքի մաս
7/2	51-52	Քանակական թվականներ
7/3	51-52	Թվականների ուղղագրությունը
7/4	53	Բաշխական թվականներ
7/5	54	Կոտորակային թվականներ
7/6	54-55	Դասական թվականներ, կազմությունը
7/7	55-56	Թվականների գործածությունը
Թեմատիկ գրավոր աշխատանք		
Ամրապնդող վարժություններ թվականի		

վերաբերյալ		
Գործնական աշխատանք		
Թեմա **Թեմատիկ պլանավորում**	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Դերանունը որպես խոսքի մաս	. Ճանաչել տալ դերանուններն իրենց տեսակներով։ . Հասնել դերանունների տարբերակման ճիշտ կիրառմանը։ . Սովորեցնել դերանունների հոլովման առանձնահատկությունները։ . Ճանաչել տալ հոդերի ուղղագրությունը և ուղղախոսությունը։.Հասնել հոդերի և նրանց ձևերիր ճիշտ կիրառմանը։ .Սովորեցնել հոդերի տեսակները։	. Ճանաչի և դուրս գրի դերանունները։ . Անհրաժեշտ տեղերում համապատասխանաբար տեղադրի դերանուններն ըստ տեսակների։ . Տրված դերանուններով կազմի բանավոր ու գրավոր խոսք։ . Տրված տեքստից դուրս գրի հոդերը և նշի դրանց տեսակները։. Կազմի նախադասություններ ստացական, դիմորոշ և ցուցական հոդերի կիրառմամբ։. Կողմնորոշվի, թե տրված դերանունների փոխարեն որ հոդերը կարելի է գործածել։
Ժամ	**Էջ**	**Դաս**
11/1	59	Դերանունը որպես խոսքի մաս
11/2	60-61	Անձնական դերանուններ
11/3	62-63	Անձնական դերանունների հոլովումը
11/4	63-64	Ցուցական դերանուններ
11/5	65-66	Փոխադարձ դերանուններ
Կիսամյակային գրավոր աշխատանք		
Անցած թեմաների կրկնություն		
Անցած թեմաների կրկնություն		
ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ		
11/6	66-68	Հարցական դերանուններ
11/7	68-69	Հարաբերական դերանուններ
11/8	70	Որոշյալ դերանուններ
11/9	71-72	Անորոշ դերանուններ
11/10	73	Ժխտական դերանուններ
11/11	74-75	Հոդեր
Ամրապնդող վարժություններ դերանվան վերաբերյալ		
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Բայը որպես խոսքի մաս	. Ներկայացնել բայի ձևաբանական առնձնահատկությունները, դրսևորման ձևերը, բայի	. Տեքստից դուրս գրի բայի դիմավոր և անդեմ ձևերը։. Կարողանա տրված տեքստում ընդգծի բայերը և որոշի դրանց

	կազմությունը(պարզ, ածանցավոր):. Ճանաչել տալ բայի դիմավոր և անդեմ ձևերի հատկանիշները:.Սովորեցնել տարբերակելու դիմավոր ձևերը անդեմներից: . Հասնել ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայերի ճիշտ կիրառմանը:. Սովորեցնել բայի անդեմ ձևերի գործածության ճիշտ կիրառությունը, դիմավոր ձևերի՝ դեմքի, թվի, ժամանակի կարգի իմացության ամրապնդմանը:	կազմությունը: . Տարբերի ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայերը: . Կողմնորոշվի, թե տեքստում ընդգծված բայերը որ սեռին են պատկանում: . Տարբերակի բայի անդեմ ձևերը դիմավոր ձևերից: . Տեքստից դուրս գրի բայի անդեմ ձևերը և դրանք գործածի նախադասությունների մեջ: .Խոնարհի դիմավոր բայերը, որոշի դեմքը, թիվը, ժամանակը և կիրառի խոսքում:
Ժամ Թեմատիկ պլանավորում	**Էջ**	**Դաս**
35/1	79	Բայը որպես խոսքի մաս
35/2	80-81	Բայի կազմությունը
35/3	82	Բայի անդեմ և դիմավոր ձևերը
35/4	83-85	Բայի սեռը
35/5	87-88	Բայի անդեմ ձևեր՝ դերբայներ
35/6	88-89	Անորոշ դերբայ
35/7	90	Ենթակայական դերբայ
35/8	90-91	Հարակատար դերբայ
35/9	92	Համակատար դերբայ
35/10	93	Անկատար դերբայ
35/11	93-94	Վաղակատար դերբայ
35/12	95	Ապակատար դերբայ
35/13	95-96	Ժխտական դերբայ
35/14	98	Բայի դիմավոր ձևեր
35/15	98-99	Դեմք
35/16	99-100	Բայի թիվը
35/17	100-101	Բայի ժամանակը
Ամրապնդող վարժություններ		
Թեմատիկ գրավոր աշխատանք		
35/18	101-102	Բայի եղանակը
35/19	103-104	Բայի խոնարհումը
35/20	104-106	Օժանդակ բայի խոնարհումը և ուղղագրությունը: Դրական և ժխտական խոնարհում
35/21	106-107	Սահմանական եղանակ

35/222	107-109	Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Անկատար ներկա: Անկատար անցյալ: Կազմությունը, խոնարհումը
35/23	110-111	Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը:Վաղակատար ներկա: Վաղակատար անցյալ: Կազմությունը, խոնարհումը
35/25	112-114	Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը; Անցյալ ապակատար: Անցյալ կատարյալ: Կազմությունը, խոնարհումը
35/25	115	Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Սահմանական ապառնի: Կազմությունը, խոնարհումը
Ամրապնդող վարժություններ բայի վերաբերյալ		
Թեմատիկ գրավոր աշխատանք		
35/26	116	Հարակատար դերբայով կազմված ժամանակային ձևեր: Կրկնություն
35/27	119	Ըղձական եղանակ, ըղձական ապառնի: Կազմությունը, խոնարհումը
35/28	120-121	Ըղձական եղանակ:Ըղձական անցյալ; Ըղձական եղանակի բայաձևերի ուղղագրությունը
35/29	121-122	Ենթադրական եղանակ: Ենթադրական ապառնի: Կազմությունը, խոնարհումը
35/30	123	Ենթադրական եղանակ: Ենթադրական անցյալ: Կազմությունը, խոնարհումը
35/31	124	Հարկադրական եղանակ: Հարկադրական ապառնի: Կազմությունը, խոնարհումը
35/32	125-126	Հարկադրական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը; Հարկադրական անցյալ
35/33	126-127	Հրամայական եղանակ: Կազմությունը, խոնարհումը

35/34	126-127	Հրամայական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը
35/35	162-166	Անկանոն և պակասավոր բայեր
Ամրապնդող վարժություններ բայի վերաբերյալ		
Թեմատիկ գրավոր աշխատանք		
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Խոսքի ոճերը: Պաշտոնական գրություններ	.Զարգացնել գեղարվետական պատումի ընկալման և գեղարվեստական ոճով պատմողական խոսք կազմելուն: .Սովորեցնել գրել և հասկանալ գովազդի ու հայտարարության, պաշտոնական ու անձնական նամակների գրության տարբերությունները:	.Գեղարվեստական ոճով բանավոր և գրավոր նկարագրի որևէ առարկա կամ իրադարձություն: .Գրի գովազդային տեքստ որևէ միջոցառման վերաբերյալ: .Կազմի գովազդային վահանակներ՝ կիրառելով նաև ոչ խոսքային միջոցներ՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառություն, նկարներ, գծագրեր: .Գրի դիմում գրադարանի աշխատակցին, մարզական կամ երաժշտական դպրոցի տնօրենին, պաշտոնական և մտերմական նամակ՝ ուսուցչին ու ընկերոջը, հասկանա և ընկալի դրանց տարբերությունները:
Ժամ **Թեմատիկ պլանավորում**	**Էջ**	**Դաս**
6/1	140-141	Խոսքի ոճերը: Գեղարվեստական ոճ
Գործնական աշխատանք		
6/2	142	Մակդիր
6/3	148	Պաշտոնական ոճ
6/4	149-150	Տեքստ: Տեղեկատվական տեքստ
6/5	150-123	Գործնական գրություններ: Հայտարարություն, գովազդ
6/6	154-157	Անձնական և պաշտոնական նամակներ: Դիմում
Բառի ձևաբանական վերլուծություն		
Կիսամյակային գրավոր աշխատանք		
Ամրապնդողվարժություններ		
Անցած թեմաների կրկնություն		

Դաս 1 –Գոյականը որպես խոսքի մաս, հատուկ և հասարակ գոյականներ

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ է ցույց տալիս գոյականը:

2. Ի՞նչ հարցերի են պատասխանում գոյականները:

3. Քանի՞ տեսակի են լինում գոյականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյականներ:

2. Իմանա, որ գոյականները պատասխանում են ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր հարցերին:

3. Իմանա, որ գոյականները լինում են երկու տեսակ՝ հատուկ և հասարակ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված բառերից ընդգծել միայն գոյականները:

նստել, ափսե, հայրենիք, հիասքանչ, այդպես, ուսուցիչ

2. Պետք է կարողանա տրված գոյականների դիմաց գրել անհրաժեշտ հարցը.

դասընկերներ-

խաղաղություն-

մայրիկ-

երգեր-

3.Պետք է կարողանա առանձնացնել և տրված այունակներում գրել հատուկ և հասարակ գոյականները (բոլոր բառերը գրված են մեծատառով).

ԵՐԿԻՆՔ, ԱՐԱՐԱՏ, ՆԿԱՐՉՈՒՀԻ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ, ՎԱՆԱ ԼԻՃ, ՀԱՄԱԶԱՍՊ

ՀԱՏՈՒԿ	ՀԱՍԱՐԱԿ

Դաս 2 –Բաղադրյալ հատուկ գոյականների ուղղագրությունը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Քանի՞ տեսակի են լինում հատուկ անունները:

2. Ինչպե՞ս տարբերել հատուկ անունների տեսակները:

3.Ինչպե՞ս են գրվում պետությունների անունները, եթե մեկից ավելի բառերից են կազմված:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ հատուկ անունները լինում են երկու տեսակ՝ պարզ և բաղադրյալ:

2. Իմանա, որ պարզ հատուկ անունները կազմված են մեկ բառից, բաղադրյալները՝ մեկից ավելի:

3. Իմանա, որ պետությունների բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա ընդգծել միայն այն հատուկ անունները, որոնք պարզ են:

Հայկական լեռնաշխարհ, Մնան, Մարիամ, Հայկ Նահապետ, Բջնի

2. Պետք է կարողանա կազմել մեկ նախադասություն՝ ***նվեր*** բառը գործածելով թե՛ որպես հասարակ, թե՛ որպես հատուկ անուն:

3. Պետք է կարողանա ընդգծել այն հատուկ անունները, որոնց միայն առաջին բաղադրիչն է մեծատառով գրվում:

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ, ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ, ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ, ՆՈՐ ԱՐԵՇ, ՍԵՎ ԾՈՎ

Դաս 3–Գոյականի տեսակները՝անձնանիշ և իրանիշ գոյականներ:

[Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է ցույց տալիս գոյականը:

2.Ինչպե՞ս տարբերել անձնանիշ և իրանիշ գոյականները:

3.Ի՞նչ հարցերի են պատասխանում անձնանիշ և իրանիշ գոյականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ գոյականը ցույց է տալիս անձ կամ իր:

2. Իմանա, որ անձնանիշ գոյականներն են մարդկանց հատուկ և հասարակ անունները:

3.Իմանա, որ անձնանիշ գոյականները պատասխանում են **ո՞վ**, իրանիշ գոյականները՝ **ի՞նչ** հարցերին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա նշել միայն այն տարբերակները, որոնք անձնանիշ գոյականներ են:

ա/ Լևոն

բ/կոշկակար

գ/քարանձավ

դ/Գավառ

2. Պետք է կարողանա գրել հինգ հատ անձնանիշ գոյական:

3. Պետք է կարողանա տրված անձնանիշ և իրանիշ գոյականների դիմաց գրել անհրաժեշտ հարցը.

դերասան-

քաղաք-

Աշտարակ-

նկարչուհի-

Դաս 4-Գոյականի թիվը, հոգնակի թվի կազմությունն ու ուղղագրությունը: Անեզական և անհոգնական գոյականներ

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Քանի՞ թիվ ունի գոյականը:

2. Ինչպե՞ս է կազմվում գոյականի հոգնակի թիվը:

3. Ի՞նչ են ցույց տալիս անեզական և անհոգնական գոյականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի:

2. Իմանա, որ գոյականի հոգնակի թիվը կազմվում է՝ եզակիին ավելացնելով ***–եր*** կամ ***–ներ*** վերջավորությունը:

3. Իմանա, որ կան գոյականներ, որոնք չունեն եզակի թիվ, դրանք անեզական գոյականներն են, իսկ միայն եզակի թվով հանդես եկող գոյականները կոչվում են անհոգնական գոյականներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա կազմել տրված գոյականների հոգնակին.

վիպագիր-

կամուրջ-

ժամագործ-

գյուղ-

2. Պետք է կարողանա գրել երեք հատ այնպիսի գոյական, որի հոգնակին կազմվում է ***–եր*** վերջավորությամբ, նույնքան գոյական, որի հոգնակին կազմվում է ***–ներ*** վերջավորությամբ:

3.Պետք է կարողանա առանձնացնել և տրված սյունակներում գրել անեզական և անհոգնական գոյականները.

քրիստոնեություն, Ալպեր, Կարենենք, թախիծ, ուսանողություն, Հիմալայներ

ԱՆԵՋԱԿԱՆ	ԱՆՀՈԳՆԱԿԱՆ

Դաս 5-Որոշյալ և անորոշ գոյականներ:

[Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Քանի՞ առում ունի գոյականը:

2. Ի՞նչ հոդ են ստանում որոշյալ գոյականները:

3. Ի՞նչ են ցույց տալիս անորոշ առումով գործածվող գոյականները. հոդ ստանու՞մ են, թե՞ ոչ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ գոյականն ունի երկու առում՝ որոշյալ և անորոշ:

2. Իմանա, որ որոշյալ առումով գործածվող գոյականները ստանում են ***ը*** կամ ***ն*** որոշիչ հոդը:

3. Իմանա, որ անորոշ առումը ցույց է տալիս խոսողին կամ լսողին անծանոթ առարկա, այդ առումով գործածվող գոյականները հոդ չեն ստանում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված գոյականներից առանձնացնել անորոշ առումով գործածված բառերը.

Ձյուն, մայրը, անծանոթներն, Կարոյին, լռություն, գրատուն

2. Պետք է կարողանա հետևյալ նախադասություններում կետերի փոխարեն գրել անհրաժեշտ հոդը.

Անձրև. . . մաքրում էր կեղտոտ փողոցները:

Ձիավորներ. . . մոտենում էին քաղաքի. . . :

Մայր. . . ամուր գրկելէր որդուն:

3. Պետք է կարողանատրված բանաստեղծական տնից դուրս գրել միայն այն գոյականները, որոնք գործածվել են որոշյալ առումով.

Մընացել է բերդը մեզ,
Հաղթանակի երթը մեզ.
Անց են կացել՝ ով կային,
Հիմի կգա հերթը մեզ:

Դաս 6 –Գոյականի հոլովները: Ուղղական հոլով:

[Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Քանի՞ հոլով ունի գոյականը:

2. Ի՞նչ է ցույց տալիս և ի՞նչ հարցերի է պատասխանում ուղղական հոլովը:

3. Ուղղական հոլովը վերջավորություն ստանու՞մ է, թե՞ ոչ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ գոյականն ունի յոթ հոլով:

2.Իմանա, որ ուղղական հոլովը բառի ուղիղ, անփոփոխ ձևն է: Պատասխանում է **ո՞վ, ովքե՞ր** կամ **ի՞նչ, ինչե՞ր** հարցերին:

3.Իմանա, որ ուղղական հոլովը որևէ վերջավորություն չի ստանում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա թվարկել գոյականի հոլովները:

2.Պետք է կարողանա կետերի փոխաներն գրել անհրաժեշտ հարցը.

Քաջարի զինվորականները (...) հսկում էին սահմանը:

Վարդգեսը (...) համերգասրահից դուրս եկավ բարձր տարմադրությամբ:

3. Պետք է կարողանա նախադասությունների մեջ ընդգծել ուղղական հոլովով դրված բառերը.

Մայրը հպարտորեն քայլում էր որդու խնամած այգու միջով:
Հայի օջախի ծուխը մշտավառ պետք է մնա:

Դաս 7– Սեռական հոլով

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ հարցերի է պատասխանում սեռական հոլովը:

2. Քանի՞ հոլովում ունի գոյականը:

3. Որո՞նք են արտաքին և ներքին հոլովիչները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ սեռական հոլովը պատասխանում է **ու՞մ** կամ **ինչի՞** հարցերին:

2. Իմանա, որ գոյականն ունի երկու հոլովում՝ արտաքին և ներքին:

3. Իմանա, որ արտաքին հոլովիչներն են՝ **ի, ու, ան, ոջ, վա, ց**: Ներքին հոլովիչներն են՝ **ա, ո**:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված նախադասություններում ընդգծել այն բառերը, որոնք դրված են սեռական հոլովով:

Պատի երկայնքով ձգվել էր պատատուկի բարակ ճյուղը:

Անսպասելիությունից փայլեցին մոր սպասող աչքերը:

2. Պետք է կարողանա առանձնացնել և տրված սյունակներում գրել արտաքին և ներքին հոլովմանը պատկանող գոյականները.

մոր, քաղաքի, ընկերոջ, ուրախության, շուն, տարվա

ՆԵՐՔԻՆ	ԱՐՏԱՔԻՆ

3. Պետք է կարողանա սեռական հոլովի հարցերի օգնությամբ,գրի և ընդգծի հետևյալ բառերի ստացած վերջավորությունները.

օր-

քամի-

Արամենք-

քույր-

լեռ-

Դաս 8–Տրական հոլով

[Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ հարցերի է պատասխանում տրական հոլովը:

2. Տրական հոլովով դրված բառերը կարո՞ղ են հոդ ստանալ:

3. Ձևով ո՞ր հոլովներին է նման տրական հոլովը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ տրական հոլովը պատասխանում է **ու՞մ, ինչի՞(ն), ե՞րբ, որտե՞ղ, ինչի՞ համար** հարցերին:

2. Իմանա, որ տրական հոլովով դրված բառերը կարող են գործածվել նաև որոշյալ առումով:

3. Իմանա, որ տրական հոլովը ձևով նման է սեռական և հայցական հոլովներին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված բառակապակցություններում ընդգծել տրական հոլովով դրված բառերը.

մոտենալ սեղանին

գնալ ջրի

նայել նկարին

2. Պետք է կարողանափակագծի մեջ առնված բառերը դնել տրական հոլովով:

Պապը կարոտով նայում էր հայրենի գյուղի… (ձորեր):

(Ամառ) . . . հավաքեցինուվաճառեցինկեռասիամբողջբերքը:

3. Պետքէ կարողանա տրված բառերը դնելտրական հոլովով.

սար-

գարուն-

արև-

Վահան-

Դաս 9–Հայցական հոլով

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ հարցերի է պատասխանում հայցական հոլովը։

2. Ձևով ո՞ր հոլովներին է նման հայցական հոլովը։

3. Հայցական հոլովը ո՞ր դեպքում է տրականի ձև ունենում և ո՞ր դեպքում՝ ուղղականի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ հայցական հոլովը պատասխանում է **ու՞մ, ի՞նչ(ը)** հարցերին։

2. Իմանա, որ հայցական հոլովը հատուկ ձև չունի, նման է կա՛մ ուղղականին, կա՛մ տրականին։

3.Իմանա, որ հայցական հոլովը տրականի ձև է ստանում, եթե գոյականն անձ է կամ գործածված է իբրև անձ, իսկ ուղղականի դեպքում իր է կամ գործածված է իբրև իր։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա հիշել, թե որ հոլովներին է նման հայցականը և ինչպես տարբերել։

2. Պետք է կարողանատրված բառերը տեղադրել աղյուսակի համապատասխան սյունակներում.

աստղ, Լուսինեին, հոր, երջանկությունը, գյուղ, քրոջը

Որպես տրականի ձև	Որպես ուղղականի ձև

3. Պետք է կարողանահետևյալ նախադասության մեջ ընդգծել հայցական հոլովով դրված բառը.

Երազիկը բացեց պատուհանի անսարք փեղկը։

Դաս 10– Բացառական հոլով

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ հարցերի է պատասխանում բացառական հոլովը:

2. Ի՞նչ վերջավորությունների միջոցով է կազմվում բացառական հոլովը:

3. Ի՞նչ է ցույց տալիս բացառական հոլովը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ բացառական հոլովը պատասխանում է **ումի՞ց, ինչի՞ց** հարցերին:

2. Իմանա, որ բացառական հոլովը կազմվում է ***–ից*** կամ ***-ուց*** վերջավորությունների միջոցով:

3. Իմանա, որ բացառական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որից ծագում կամ սկսվում է գործողությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանատրված նախադասություններում ընդգծել այն բառերը, որոնք դրված են բացառական հոլովով:

Պատից պոկվեց ու ընկավ Համո պապից հուշ մնացած ժամացույցը:

Երկու տարուց ավել էր, ինչ Աննան հեռու էր ապրում հարազատներից:

2. Պետք է կարողանա առանձնացնել այն գոյականները, որոնք դրված են բացառական հոլովով.

Սարոյից, քաղաքի, ընկերոջ, երջանկությունից, գարնան,

3. Պետք է կարողանա կազմել նախադասություններ՝ տրված բառերը գործածելով բացառական հոլովով.

քարանձավ, դաշտ, ցնծություն

Դաս 11–Գործիական հոլով

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ցույց տալիս գործիական հոլովը։

2. Ի՞նչ վերջավորությունների միջոցով է կազմվում գործիական հոլովը։

3.Ի՞նչ հարցերի է պատասխանում գործիական հոլովը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ գործիական հոլովը ցույց է տալիս այն առարկան, որով կատարվում է գործողությունը։

2. Իմանա, որ գործիական հոլովը կազմվում է ***–ով*** կամ ***-ը*** վերջավորությունների միջոցով։

3. Իմանա, որ գործիական հոլովը պատասխանում է **ումո՞վ, ինչո՞վ** հարցերին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված բառակապակցություններում ընդգծել գործիական հոլովով դրված բառերը.

երջանկությամբ լցված

մսով ապուր

օրերով սպասել

2. Պետք է կարողանա փակագծի մեջ առնված բառերը դնել գործիական հոլովով։

Մայրը (թան) . . .ու (սիբեխ) . . .ապուր էր պատրաստում։

Տղան. . . (ցնծություն) ու. . . (սեր) ընդունեց ստացած հրավերը։

3. Պետք է կարողանատրված բառերը դնել գործիական հոլովով.

այգի-

ամիս-

գիշեր-

բանվոր-

Դաս 12–Ներգոյական հոլով

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է ցույց տալիս ներգոյական հոլովը։

2. Ի՞նչ հարցերի է պատասխանում ներգոյական հոլովը։

3. Ներգոյական հոլովն ի՞նչ վերջավորություն է ստանում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ ներգոյական հոլովը ցույց է տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը։

2. Իմանա, որ ներգոյական հոլովը պատասխանում է **որտե՞ղ, ինչու՞մ**(կամ **ինչի՞ մեջ**) հարցերին։

3.Իմանա, որ ներգոյական հոլովը կազմվում է ***–ում*** վերջավորության միջոցով կամ ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է սեռական հոլովով և ***մեջ*** կապով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված բառերը գործածել ներգոյական հոլովով.

թփուտ-

ամիս-

դպրոց-

Հրազդան-

2.Պետք է կարողանա փակագծի մեջ առնված բառերը դնել ներգոյական հոլովով։

Երեք. . . (ամիս) հազիվ կարողացավ փոփոխել այդ անհաջող. . . (պայմանագիր) նշված կետերը։

. . . (Հող) թաղված ծառի արմատները թուլացրել էին պարսպի հիմքը։

3. Պետք է կարողանա հետևյալ նախադասության մեջ ընդգծել ներգոյական հոլովով դրված բառերը.

Զբոսայգում իր տեղը գտավ թփերի մեջ կուչ եկած վարդենին։

Դաս 13–Ածականը որպես խոսքի մաս

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ցույց տալիս ածականը:

2. Ի՞նչ հարցերի են պատասխանում ածականները:

3. Նախադասության մեջ ինչպիսի՞ լրացումներ են դառնում ածականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ հատկություն կամ վերաբերություն ցույց տվող բառերը կոչվում են ածականներ:

2. Իմանա, որ ածականները պատասխանում են **ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր** հարցերին:

3. Իմանա, որ ածականները նախադասության մեջ գործածվում են որպես գոյականական անդամի լրացում: Ածականները գործածավում են նաև գոյականաբար /փոխանվանաբար/:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված բառերից ընդգծել միայն ածականները:

պայծառ, մայրամուտ, կարմիր, հիասքանչ, ովքեր, գրատուն

2. Պետք է կարողանա կազմել նախադասություններ՝ հետևյալ գոյականների հետ գործածելով ածականներ.

երեխաներ, լողավազան, ջրաշուշան, Հակոբ

3.Պետք է կարողանա առանձնացնել և տրված սյունակներում գրել գոյականներն ու ածականները.

մտամոլոր, դաշտավայր, գեղանի, համբերատար, լեռ, հրապարակ

ԳՈՅԱԿԱՆ	ԱԾԱԿԱՆ

Դաս 14 - Ածականի տեսակները Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Քանի՞ տեսակի են լինում ածականները:

2. Ի՞նչ են ցույց տալիս որակական և հարաբերական ածականները:

3.Ի՞նչ ածանցներով են կազմվում հարաբերական ածականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ ածական անունները լինում են երկու տեսակի՝ որակական և հարաբերական:

2. Իմանա, որ որակական ածականները ցույց են տալիս առարկայի հատկություն, իսկ հարաբերական ածականները՝ առարկայի հատկանիշը մեկ այլ առարկայի հարաբերությամբ:

3. Իմանա, որ հարաբերական ածականները կազմվում են **–ական, -այինն, -ե, -եղեն, -ենի, -յա,**

-յան ածանցներով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա նշել ածականի տեսակները:

2. Պետք է կարողանա կետերի փոխարեն գրել ածականներ.

…երկնքում սավառնում էին ….թռչունները, իսկ …թիթեռները վեր ու վար էին անում իրենց …թևիկները:

3. Պետք է կարողանա ընդգծել այն ածականները, որոնք ունեն ածանցներ.

փայտե, մաքուր, հայրական, խիզախ, ջրային, մայրենի

Դաս 15 - Որակական ածականի համեմատության աստիճանները Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Որո՞նք են որակական ածականների համեմատության աստիճանները:

2.Ինչպե՞ս է կազմվում որակական ածականների բաղդատական աստիճանը:

3. Ինչպե՞ս է կազմվում որակական ածականների գերադրական աստիճանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ որակական ածանների համեմատության աստիճանները երեքն են՝ **դրական, բաղդատական, գերադրական:**

2. Իմանա, որ որակական ածականների բաղդատական աստիճանը կազմվում է.

ա/ ածականի դրական աստիճանի ձևին ավելացնելով ավելի բառը / ավելի մեծ/

բ/ ածականի դրական աստիճանի ձևին ավելացնելով ***պակաս***, ***նվազ*** կամ ***քիչ*** բառերը / **նվազ** կամ **պակաս** ջանասեր, **քիչ** աշխատասեր /

3. Իմանա, որ որակական ածականների գերադրական աստիճանը կազմվում է ածականի դրական աստիճանի ձևին ավելացնելով.

ա/ ամենա- նախածանցը / ամենամեծ/
բ/ -/ա/գույն ածանցը /լավագույն/

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա ըստ որակական ածականի աստիճանների խմբավորել տրված բառերը.

Գեղեցիկ, լավագույն, ամենաքաջ, քիչ աշխատասեր, ծույլ, ազնվագույն, մեծ

ԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

2.Պետք է կարողանա կազմել տրված բառերի բաղդատական աստիճանը.

Վախկոտ, փոքր, ազնիվ, քաջ, բարի, համեստ

3.Պետք է կարողանա ընդգծել գերադրական աստիճանով դրված ածականները.

Նվազագույն, լավագույն, մեծ, փոքր, ամենահին, ամենաամուր, ծանր, ավելի հոգատար

Դաս16- Ածականի մակդիրային կիրառությունը, գործածությունը գոյականի հետ

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Նախադասության մեջ որպես ի՞նչ է գործածվում ածականը:

2.Կարո՞ղ է ածականը գործածվել գոյականաբար:

3. Կարո՞ղ են ածականները գործածվել հավասարապես և՛ գոյականաբար, և՛ ածականաբար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ նախադասության մեջ ածականը գործածվում է որպես բայական կամ գոյականական անդամի լրացում:

2. Իմանա, որ ածականը խոսքի մեջ կարող է գործածվել գոյականաբար:

3. Իմանա, որ հայերենում կան բառեր, որոնք հավասարապես կարող են գործածվել և՛ գոյականաբար, և՛ ածականաբար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա կազմել նախադասություններ տրված գոյականների հետ գործածելով ածականներ.

Երազանք, առու, միտք, լեզու, գլխարկ

2. Պետք է կարողանա տրված նախադասությունից դուրս գրել ածականը և նշել, թե ինչ է անդամի լրացում է.

Աշխարհի ամենաաղմկոտ գետն է Նեղոսը:

3. Պետք է կարողանա տրված բառերով կազմել նախադասություններ այնպես, որ դրանք գործածվեն և՛ իբրև գոյականներ, և՛ իբրև ածականներ.

Աղքատ, գիժ, գող, ծերունի

Դաս17- Թվականը որպես խոսքի մաս Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ցույց տալիս թվականը:

2. Քանի՞ տեսակ են լինում թվականները:

3. Թեքվո՞ղ խոսքի մաս է թվականը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ թվականը ցույց է տալիս առարկաների թիվ կամ թվային կարգ:

2. Իմանա, որ թվականները լինում են 2 տեսակ՝ քանակական և դասական:

3. Իմանա, որ թվականը չթեքվող խոսքի մաս է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա սահմանել, թե ի՞նչ է ցույց տալիս թվականը և ի՞նչ հարցերի է պատասխանում:

2. Պետք է կարողանա առանձնացնել թվականները.

Կարմիր, դպրոց, յոթ, հինգերորդ, քաջաբար, քսանչորս:

3. Պետք է կարողանա տրված նախադասության մեջ ընդգծել թվականները.

Հայկական լեռնաշխարհը մի ընդարձակ երկիր է, որի տարածությունը չորս հազար քառակուսի կիլոմետր է, միջին բարձրությունը՝ հազար յոթ հարյուր մետր:

Դաս18 - Քանակական թվականներ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են ցույց տալիս քանակական թվականները:

2. Քանի՞ տեսակ են լինում քանակական թվականները:

3. Որո՞նք են բացարձակ թվականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ քանակական թվականները ցույց են տալիս առարկաների քանակ:

2. Իմանա, որ քանակական թվականները լինում են 3 տեսակ՝ բացարձակ, կոտորակային և բաշխական:

3. Իմանա, որ բացարձակ թվականներ են միավորները, տասնավորները, հարյուրավորները և ավելի բարձր թվականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա դուրս գրել 4 քանակական թվական.

Առաջին, միլիոն, մեկ հինգերորդ, յոթանասուն, հազար երկու հարյուր, քառասուներորդ

2. Պետք է կարողանա տրված բացարձակ թվականներից կազմել կոտորակային թվականներ՝ գրելով թվանշաններով և բառերով.

5 և 7, 5 և 100, 15 և 68

3. Պետք է կարողանա տրված բացարձակ թվականները գրել բառերով.

10, 25, 1000, 70

Դաս19-Թվականների ուղղագրությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Կազմությամբ քանի՞ տեսակ են լինում թվականները:

2. Ո՞ր ածանցով են կազմվում ածանցավոր թվականները:

3. Ի՞նչ ուղղագրություն ունեն հայերենի կցական բարդությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ թվականները կազմությամբ լինում են 4 տեսակ՝ պարզ, ածանցավոր, բարդ և բարդածանցավոր:

2. Իմանա, որ ածանցավոր թվականները կազմվում են **–ուն** ածանցով:

3. Իմանա, որ կցական բարդություններ են այն բոլոր թվականները, որոնք կազմված են տասնավորից և միավորից /11-ից մինչև 99-ը/, որոնք գրվում են միասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա առանձնացնել պարզ, ածանցավոր և բարդածանցավոր թվականները.

Հազար, վաթսուն, իննսուն, երեսունյոթ, հազար հիսուն, ութ

Պարզ	Ածանցավոր	Բարդածանցավոր

2.Պետք է կարողանա տրված թվականները գրել բառերով.

11, 24, 101

3. Պետք է կարողանա կազմել նախադասություններ՝ գործածելով տրված թվականները.

89, 10, 58

Դաս 20 - Բաշխական թվականներ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ո՞ր ածանցի միջոցով են կազմվում բաշխական թվականները:

2. Ինչպե՞ս են առանց ածանցի կազմվում բաշխական թվականները:

3.Ի՞նչ են ցույց տալիս բաշխական թվականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ բաշխական թվականները կազմվում են բացարձակ թվականին ավելացնելով ***ական*** վերջածանցը /օր.՝ իննական/

2.Իմանա, որ բաշխական թվականները կազմվում են բացարձակ թվականի կրկնությամբ /օր.՝ հինգ-հինգ/

3. Իմանա, որ բաշխական թվականները ցույց են տալիս առարկաների բաշխումը որոշակի թվային քանակով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա տրված բացարձակ թվականներից ածանցի միջոցով կազմել բաշխական թվականներ.

36, 100, 28, 430

2.. Պետք է կարողանա տրված բացարձակ թվականներից կրկնության միջոցով կազմել բաշխական թվականներ.

115, 79, 22, 10

3. Պետք է կարողանա ընդգծել բաշխական թվականները.

Յոթ, քսանհինգական, հարյուր-հարյուր, ութսուն, հիսունական, միլիոն,

Դաս 21-Կոտորակային թվականներ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են ցույց տալիս կոտորակային թվականները:

2.Ի՞նչ կազմություն ունեն կոտորակային թվականները:

3.Ինչպե՞ս են գրվում կոտորակային թվականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ կոտորակային թվականները ցույց են տալիս միավորի մեկ կամ մի քանի հավասար մասերից կազմված թվեր:

2. Իմանա, որ կոտորակային թվականների առաջին բաղադրիչը՝ համարիչը, բացարձակ թվական է, երկրորդը՝ հայտարարը, կազմվում է -**րորդ**, -**երորդ** կամ -**երորդական** ածանցներով:

3. Իմանա, որ կոտորակային թվականները հարադրական բարդություններ են և գրվում են առանձին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված բացարձակ թվականներից կազմել կոտորակային թվականներ՝ գրելով թվանշաններով և բառերով.

59 և 7, 25 և 46, 1 և 6

2. Պետք է կարողանա ընդգծել կոտորակային թվականները.

Քսանյոթ, հազար հինգ հարյուր, վեց-վեց, երկու երրորդ, երեք հարյուրերորդական

3. Պետք է կարողանա կազմել նախադասություններ տրված կոտորակային թվականներով՝ գործածելով դրանք թվերով և բառերով.

4 և 7, 38 և 78, 5 և 3

Դաս 22 - Դասական թվականներ, կազմությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են ցույց տալիս դասական թվականները:

2.Ի՞նչ ածանցներով են կազմվում դասական թվականները:

3.Ինչպե՞ս են գրվում դասական թվականները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ դասական թվականները ցույց են տալիս առարկայի թվային կարգ:

2. Իմանա, որ դասական թվականները կազմվում են բացարձակ թվականներին ավելացնելով ***–րորդ*** կամ ***–երորդ*** վերջածանցները:

3. Իմանա, որ դասական թվականները գրվում են.

ա/արաբական թվանշաններով /օր.՝ 12-րդ, 5-րդ/
բ/ Հայկական այբուբենի տառերով՝ դրանց թվային արժեքի համապատասխան /օր.՝ Ժ-10-րդ/
գ/ Հռոմեական թվանշաններով /օր.՝ M /1000-րդ/, V/5-րդ/

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա կազմել դասական թվականներ հետևյալ բացարձակ թվականներից.

2, 1000, 89, 62

2. Պետք է կարողանա տրված դասական թվականները գրել հայերեն այբուբենի տառերով.

9-րդ, 25-րդ, 7-րդ

3. Պետք է կարողանա նշել՝ որն է դասական թվական.

ա/ յոթերորդ
բ/ հինգ
գ/ մեկ քսանհիգերորդ
դ/ հարյուր մեկ

Դաս 23 -Թվականների գործածությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Նախադասության մեջ ի՞նչ անդամ է դառնում թվականը:

2. Նախադասության ո՞ր անդամներին է լրացնում թվականը:

3. Թվականը կարո՞ղ է գործածվել գոյականաբար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ նախադասության մեջ թվականը դառնում է լրացում:

2. Իմանա, որ թվականը նախադասության մեջ հիմնականում դառնում է գոյականի լրացում:

3. Իմանա, որ թվականը կարող է գործածվել գոյականաբար, հոդ ստանալ և հոլովվել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա տրված նախադասության մեջ գտնել թվականը և նշել պաշտոնը.

Էջմիածնի մայր տաճարն ունի հազար յոթ հարյուր տարվա պատմություն:

2. Պետք է կարողանա տրված թվականները նախադասության մեջ կիրառել իբրև գոյականի լրացումներ:

Հիսունվեց, յոթական

3. Պետք է կարողանա հոլովել տրված թվականները.

Տասնութ, յոթ

Դաս 24 - Դերանուններ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են ցույց տալիս դերանունները:

2. Քանի՞ տեսակ են լինում դերանունները:

3. Նախադասության մեջ ի՞նչ պաշտոն է կատարում դերանունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ դերանունները մատնացույց են անում առարկա, հատկանիշ, քանակ՝ առանց դրանք անվանելու:

2. Իմանա, որ դերանունները լինում են 8 տեսակ:

3. Իմանա, որ նախադասության մեջ դերանունը լինում է ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա կետերի փոխարեն գրել դերանուններ.

Առաջին իսկ բոպեից. . . . պետք է զգան , որ . . . ուրախ ես :

2. Պետք է կարողանա լրացնել շարքը՝ գրելով դերանունների տեսակները.

Անձնական, ցուցական, փոխադարձ……

3. Պետք է կարողանա տրված նախադասության մեջ գտնել դերանունները և նշել պաշտոնները.

Նա սովորում էր Վանի կենտրոնական վարժարանում, բայց նրա մասին խոսում էին բոլոր դպրոցներում:

Դաս 25 - Անձնական դերանուններ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են ցույց տալիս անձնական դերանունները:

2. Քանի՞ դեմք ունեն անձնական դերանունները:

3. Քանի՞ թիվ ունեն անձնական դերանունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ անձնական դերաննուները մատնացույց են անում խոսող, խոսակից կամ մի երրորդ անձ՝ առանց դրանք անվանելու:

2. Իմանա, որ անձնական դերանուններն ունեն 3 դեմք՝ 1-ին, 2-րդ և 3-րդ:

3. Իմանա, որ անձնական դերանուններն ունեն 2 թիվ՝ եզակի և հոգնակի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա նշել անձնական դերանունները.

ա/ մենք
բ/ բոլոր
գ/ դու
դ/ ձեզ

2. Պետք է կարողանա նախադասության մեջ ընդգծել անձնական դերանունները՝ նշելով դրանց դեմքը.

-Տղա՛ս, հիմա տան տղամարդը դու ես, մենք քեզ ենք վստահում տան կառավարումը:

3. Պետք է կարողանա եզակի թվով դրված անձնական դերանունները դարձնել հոգնակի և կիրառել նախադասությունների մեջ.

Ես, դու, նա, ինքս

Դաս 26 - Անձնական դերանունների հոլովումը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Անձնական դերանունները գոյականի նմա՞ն են հոլովվում:

2. Ինչպե՞ս են հոլովվում անձնական դերանունները:

3. Նախադասության մեջ ի՞նչ պաշտոն է կատարում անձնական դերանունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ անձնական դերանունների հոլովումը տարբերվում է գոյականի հոլովումից և ունեն առանձնահատուկ հոլովում:

2. Իմանա, որ աձնական դերանունները սեռական և տրական հոլովներում հոլովական վերջավորություն չեն ստանում, այլ ունենում են մի ուրիշ հիմք:

3. Իմանա, որ անձնական դերանունը նախադասության մեջ լինում է ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

Պետք է կարողանա եզակի և հոգնակի թվով հոլովել անձնական դերանունները.

Ես, ինքս
դու, ինքդ
նա, ինքը

2. Պետք է կարողանա որոշել տրված անձնական դերանունների դեմքը, թիվը, հոլովը.

Դուք, նրանով, իրենցից, քեզ, ինձնով

3. Պետք է կարողանա տրված անձնական դերանուններով կազմել նախադասություններ՝ դրանք կիրառելով իբրև ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում.

Մենք, դու, նրանցից

Դաս 27 – Ցուցական դերանուն Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են մատնացույց անում ցուցական դերանունները:
2. Կարո՞ղ են հոլովվել բոլոր ցուցական դերանունները:
3. Կազմությամբ քանի՞ տեսակ են լինում ցուցական դերանունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ ցուցական դերանունները մատնացույց են անում առարկա, հատկություն, քանակ, գործողության տեղ և ձև՝ առանց դրանք անվանելու:
2. Իմանա, որ ցուցական դերանունները հոլովվում են:
3. Իմանա, որ ցուցական դերանունները կազմությամբ լինում են պարզ և բարդ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա թվարկել մի քանի ցուցական դերանուններ:
2. Պետք է կարողանա հոլովել *սա, դա, նա, այս, այդ, այն* ցուցական դերանունները:
3. Պետք է կարողանա մեկ գծով ընդգծել պարզ, երկու գծով՝ բարդ ցուցական դերանունները.

այս, այնչափ, այսքան, նույն, այդպիսի

Դաս 28 – Փոխադարձ դերանուններ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ են ցույց տալիս փոխադարձ դերանունները:

2.Կարո՞ղ են հոլովվել բոլոր փոխադարձ դերանունները:

3.Նախադասության մեջ ի՞նչ պաշտոն կարող են ունենալ փոխադարձ դերանունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ փոխադարձ դերանունները ցույց են տալիս միմյանց հետ կապված առարկաներ կամ անձեր՝ առանց դրանք անվանելու:

2.Իմանա, որ փոխադարձ դերանունների սեռական, տրական և հայցական հոլովները ձևով նույնն են, իսկ ուղղական և ներգոյական հոլովներ չունեն:

3.Իմանա, որ փոխադարձ դերանունները նախադասության մեջ լինում են միայն լրացում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա հետևյալ փոխադարձ դերանուններով կազմել նախադասություններ. *իրար, միմյանց*

2. Պետք է կարողանա հոլովել փոխադարձ դերանունները:

3.Պետք է կարողանա նախադասությունների մեջ ընդգծել փոխադարձ դերանունները.

ա) Իրար գրկած երկու ստվեր…

բ) … Սև ստվերները հսկա լեռներից

Ձորերն են ընկել, մեկմեկի գրկել:

գ) Մեզ կյանքը նետեց միմյանցից հեռու,

Եվ մենք չուզեցինք մեկմեկու կանչել:

Դաս 29 – Հարցական դերանուններ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են արտահայտում հարցական դերանունները:
2. Նախադասության մեջ ի՞նչ պաշտոն կարող են ունենալ հարցական դերանունները:
3. Ինչպիսի՞ առոգանությամբ են արտասանվում հարցական դերանունները, և որտե՞ղ է դրվում հարցական նշանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ հարցական դերանունները արտահայտում են հարցում անձի կամ առարկայի, դրանց հատկության, թվի, գործողության տեղի, ժամանակի, ձևի և այլնի մասին:

2. Իմանա, որ հարցական դերանունները նախադասության մեջ լինում են ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:

3. Իմանա, որ հարցական դերանունները արտասանվում են հարցական առոգանությամբ, և հարցական դերանունների վերջին ձայնավորի վրա դրվում է հարցական նշան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա ասել, թե ինչ են արտահայտում հարցական դերանունները և թվարկել մի քանի հարցական դերանուններ:

2. Պետք է կարողանա նախադասությունների մեջ գտնել հարցական դերանունները.

ա) Ո՞ր որդին է հասկանում հորը և ինչո՞ւ պիտի հասկանա:

բ) Ի՞նչը քեզ քայքայեց, հայրի՛կ:

գ) Դու նրա հետ վիճե՞լ ես, ինչի՞ համար:

3. Պետք է կարողանա տրված բառերի վրա ճիշտ տեղում տեղադրել հարցական նշանները և հարցական առոգանությամբ կարդա բառերը.

ինչպիսի, որքան, քանիսը, որտեղ, ինչու, ուր

Դաս 30 – Հարաբերական դերանուններ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են արտահայտում հարաբերական դերանունները:

2. Ինչո՞վ են տարբերվում հարաբերական դերանունները հարցական դերանուններից:

3. Ի՞նչ պաշտոն են կատարում հարաբերական դերանունները նախադասության մեջ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ հարաբերական դերանունները արտահայտում են մի նախադասության կապը, հարաբերելը մյուսին:

2. Իմանա, որ հարաբերական դերանունները, ի տարբերություն հարցական դերանունների, հարցում չեն արտահայտում:

3. Իմանա, որ հարաբերական դերանունները նախադասության մեջ կարող են լինել ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա թվարկել մի քանի հարաբերական դերանուններ:

2. Պետք է կարողանա տվյալ նախադասությունների մեջ գտնել և ընդգծել հարաբերական դերանունները.

ա) Ով աշխատի, նա կուտի:

բ) Ով է տեսել էսպես հարսանիք,

Ոչ հարս ունին, ոչ՝ փեսա:

գ) Երբ էլ գնանք, գրկաբաց ընդունում են մեզ:

3. Պետք է կարողանա հետևյալ հարբերական դերանուններով կազմել

նախադասություններ.

ա/ով

բ/ինչ

գ/երբ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են ցույց տալիս որոշյալ դերանունները:
2. Ի՞նչ պաշտոն են կատարում որոշյալ դերանունները նախադասության մեջ:
3. Ինչպե՞ս են գրվում հարադրական կազմություն ունեցող որոշյալ դերանունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ որոշյալ դերանունները ցույց են տալիս առարկաների կամ անձերի, որոշյալ ամբողջություն՝ միասնաբար կամ առանձին վերցրած՝ առանց դրանք անվանելու:
2. Իմանա, որ որոշյալ դերանունները նախադասության մեջ լինում են ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:
3. Իմանա, որ հարադրական կազմություն ունեցող որոշյալ դերանունների բաղադրիչները գրվում են անջատ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված որոշյալ դերանուններով կազմել նախադասություններ. *ամբողջ, ամեն ինչ, բոլոր*
2. Պետք է կարողանա տրված նախադասություններում գտնել և ընդգծել որոշյալ դերանունները:

ա) Այդ մասին բոլորը գիտեն:

բ) Ազնվորեն պատմիր մեզ ողջ ճշմարտությունը:

գ) Քո ներկայությունն ինձ համար ամեն ինչ է:

3. Պետք է կարողանա այունակներում գրել 2-ական միասին և անջատ գրվող որոշյալ դերաննուններ:

միասին	անջատ

Դաս 32- Անորոշ դերանուններ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են մատանցույց անում անորոշ դերանունները:
2. Ի՞նչ պաշտոն են կատարում անորոշ դերանունները:
3. Կազմությամբ քանի՞ տեսակ են լինում անորոշ դերանունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, թե ինչ են մատնացույց անում անորոշ դերանունները և թվարկի դրանցից մի քանիսը:
2. Իմանա, որ անորոշ դերանունները նախադասության մեջ լինում են ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:
3. Իմանա, որ անորոշ դերանունները կազմությամբ լինում են պարզ և բարդ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա ասել, թե ինչ են մատնացույց անում անորոշ դերանունները և թվարկի դրանցից մի քանիսը:
2. Պետք է կարողանա տվյալ նախադասությունների մեջ գտնել և ընդգծել ստորոգյալ կազմող անորոշ դերանունները.

ա*) Ոմանք միացան լեռնագնացների ջոկատին:*

բ) Հիմա ուրիշ են ժամանակները:

գ) Որոշ ձեռագրեր պահպանվել են մինչև մեր օրերը:

3. Պետք է կարողանա որոշել պարզ և բարդ անորոշ դերանունները և տեղադրել համապատասխան սյունակներում.

այնինչ, որոշ, երբևէ, ուրիշ

պարզ	բարդ

Դաս 33 - Ժխտական դերանուններ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ են մատնացույց անում ժխտական դերանունները:
2. Ի՞նչ պաշտոն են կատարում ժխտական դերանունները:
3. Կազմությամբ ինչպիսի՞ բառեր են ժխտական դերանունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ ժխտական դերանունները մատնացույց են անում ժխտվող առարկաներ կամ անձեր՝ առանց դրանք անվանելու:
2. Իմանա, որ ժխտական դերանունները նախադասության մեջ լինում են ենթակա, ստորոգյալ կազմող բառ, լրացում:
3. Իմանա, որ ժխտական բոլոր դերանունները կազմությամբ բարդ բառեր են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա թվարկել մի քանի ժխտական դերանուններ:
2. Պետք է կարողանա *ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը* ժխտական դերանուններից մեկն օգտագործել նախադասության մեջ իբրև ենթակա:
3. Պետք է կարողանա միացած և անջատ գրվող ժխտական դերանունները տեղադրել համապատասխան սյունակներում.

միասին	անջատ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Որո՞նք են դերանվանական հոդերը և ի՞նչ են ցույց տալիս:
2. Ըստ իրենց դերանվանական նշանակության՝ քանի՞ տեսակ են լինում հոդերը:
3. Որո՞նք են հոդերից յուրաքանչյուրին բնորոշ մասնիկները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ *ս, դ, ն, ը* մասնիկները դերանվանական հոդեր են և ցույց են տալիս ստացականություն, ցուցականություն, դիմորոշություն, որոշյալություն:
2. Իմանա, որ ըստ իրենց դերանվանական նշանակության՝ հոդերը լինում են ստացական, դիմորոշ, որոշիչ և ցուցական:
3. Իմանա, որ հոդերից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ մասնիկը կամ մասնիկները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա թվարկել *ս, դ, ն, ը* դերանվանական հոդերը և ասել, թե ինչ են ցույց տալիս դրանք:
2. Պետք է կարողանա հետևյալ տեքստում գտնել և ընդգծել հոդերը:

   Սրտիս ուրախությունը հետդ կկիսեմ: Ընթացքն այս կյանքի միասին կանցնենք ու երազներս ես քեզ կնվիրեմ:
3. Պետք է կարողանա տրված հոդերը միացնել հետևյալ բառերին և կազմել նախադասություններ.

   ս, դ, ն, ը – գիրք, պայուսակ, կատու, ծառ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ցույց տալիս բայը:
2. Քանի՞ տեսակ են լինում բայերը:
3. Ո՞րն է բայի շարահյուսական դերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ բայը ցույց է տալիս գործողություն:
2. Իմանա, որ բայերը լինում են դիմավոր և անդեմ:
3. Իմանա, որ ըստ շարահյուսական դերի՝ բայերը նախադասության մեջ լինում են ստորոգյալ, գոյականական և բայական անդամի լրացումներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված նախադասություններում ընդգծել բայերը և ասի, թե ինչ հարցերի են պատասխանում.

ա) Երեխաները վազում էին դեպի անտառը:

բ) Դաշտերի վրա տարածվեցին արևի ճառագայթները:

գ) Վերևից հոսում էր սառնորակ աղբյուրի ջուրը:

2. Պետք է կարողանա կազմել մեկական նախադասություն բայի դիմավոր և անդեմ ձևերով */վազում եմ-վազող/:*

3. Պետք է կարողանա հետևյալ գոյականների հետ գործածել համապատասխան գործողություն ցույց տվող բայեր.

աղավնի, ամպեր, ծով, օդանավ, լուսին, նժույգներ

Դաս 36– Բայի կազմությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞րն է կոչվում բայի հիմք:
2. Ըստ կազմության՝ քանի՞ տեսակ է լինում բայի հիմքը:
3. Ըստ կազմության և քերականական իմաստների՝ որո՞նք են ածանցավոր բայերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ բայի հիմքը *ել, ալ,* վերջավորություններից առաջ ընկած մասն է:
2. Իմանա, որ բայի հիմքը կազմությամբ լինում է պարզ և ածանցավոր:
3. Իմանա, որ հայերենի ածանցավոր բայերն ըստ իրենց իմաստի չորս տեսակ են՝ **սոսկածանցավոր, պատճառական, բազմապատկական, կրավորական**:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա հետևյալ բառերում ընդգծել բայի հիմքը.

կարդալ, վազել, խաղալ, երգել

2. Պետք է կարողանա առանձնացնել և տրված սյունակներում գրել պարզ և ածանցավոր հիմք ունեցող բայերը.

հեռագրել, մոտենալ, բարձրացնել, ղեկավարել

պարզ	ածանցավոր

3. Պետք է կարողանա տրված բայածանցներն առանձնացնել և գրել համապատասխան սյունակներում.

ան, են, ն, չ, ացն, եցն, ցն, ատ, ոտ, կլտ տ, ոտ, կոտ, վ

Սոսկածանցավոր	Պատճառական	Բազմապատկ.	Կրավորական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ դրսևորման ձևերով է գործածվում բայը նախադասության մեջ:
2. Որո՞նք են դիմավոր բայի հատկանիշները:
3. Ինչպե՞ս են կոչվում բայի անդեմ ձևերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ բայը նախադասության մեջ գործածվում է երկու ձևով՝ **դիմավոր և անդեմ:**

2. Իմանա, որ դիմավոր բայի քերականական հատկանիշներն են **դեմքը, թիվը, ժամանակը, եղանակն ու սեռը:**

3. Իմանա, որ բայի անդեմ ձևերն անվանվում են նաև **դերբայներ**:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված տեքստից դուրս գրել դիմավոր և անդեմ բայերը.

Արշակ թագավորն իր մտքում այս բոլորը մտածելով՝ ձգեց, թողեց իր պատերի ժառանգությունը՝ ամեն բան բուսցնող, բարություն արտադրող, օգուտի և դեղի համար ամեն բան ունեցող Այրարատ գավառը:

դիմավոր բայեր –

անդեմ բայեր –

2. Պետք է կարողանա հետևյալ բայերի դիմաց գրել դեմքը, թիվը և ժամանակը.

սիրում եմ –

կկարոտես –

կառուցել են -

3. Պետք է կարողանա կազմել նախադասություններ՝ գործածելով տրված բայի անդեմ ձևերը.

լողացող, կարդացած, կերակրել

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Քանի՞ սեռ ունի բայը: Ի՞նչ են ցույց տալիս ներգործական սեռի բայերը:
2. Ի՞նչ են ցույց տալիս կրավորական սեռի բայերը:
3. Ի՞նչ են ցույց տալիս չեզոք սեռի բայերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ ներգործական սեռի բայերը պահանջում են հայցական հոլովով լրացում (ուղիղ խնդիր) և ստանում ո՞ւմ կամ ի՞նչ հարցը:
2. Իմանա, որ կրավորական սեռի բայերը պահանջում են բացառական հոլովով լրացում (ներգործող խնդիր) և ստանում ումի՞ց, ինչի՞ց, ո՞ւմ կողմից հարցերը:
3. Իմանա, որ չեզոք սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որ ենթական կատարում է ինքնին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա կազմել նախադասություններ՝ հետևյալ ներգործական սեռի բայերի հետ գործածելով ուղիղ խնդիր լրացում.

բռնել, որսալ, կառուցել

2. Պետք է կարողանա տրված ներգործական սեռի բայերը դարձնել կրավորական.

ավարտել-

սիրել-

հուզել-

ծածկել-

3. Պետք է կարողանա առանձնացնել և տրված սյունակներում գրել ներգործական,

կրավորական և չեզոք սեռի բայերը.

հաղթել, օրորվել, մտնել, ասվել, շողալ, հիացնել

Սոսկածանցավոր	Կրավորական	Չեզոք

Դաս 39 – Բայի անդեմ ձևեր՝դերբայներ [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Որո՞նք են բայի անդեմ ձևերը և ինչպե՞ս են կոչվում:

2. Ինչպե՞ս են ստորոգյալ դառնում բայի անդեմ ձևերը նախադասության մեջ:

3. Ի՞նչ պաշտոններ են կատարում նախադասության մեջ դերբայները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ բայի անդեմ ձևերը առանց եղանակի, ժամանակի, դեմքի և թվի գործողություն ցույց տվող բայաձևերն են, որոնք կոչվում են նաև դերբայներ:
2. Իմանա, որ բայի անդեմ ձևերը նախադասության մեջ ստորոգյալ են դառնում միայն օժանդակ բայի հետ:
3. Իմանա, որ բայի անդեմ ձևերը նախադասության մեջ կատարում են նաև ենթակայի ու լրացման պաշտոններ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տրված տեքստից դուրս գրել բայի դիմավոր և անդեմ ձևերը.

Մեր գյուղն են գալիս մի խումբ գիտնականներ և, տեսնելով Արգիշտիի արձանագրության քարը, շատ ուրախանում են, ցանկանում են տանել իրենց հետ՝ փոխարենը մեծ գումար առաջարկելով գյուղին:

դիմավոր բայեր	անդեմ բայեր

2. Պետք է կարողանա կազմել նախադասություններ՝ տրված դերբայներին կցելով օժանդակ բայեր.

երգում, ննջել, կարդալու

3. Պետք է կարողանա տրված նախադասություններում ընդգծել ենթակայի ու լրացման պաշտոններ կատարող դերբայները՝ ենթական մեկ, լրացումը՝ երկու գծով:

ա) Հաղթելը հայ ժողովրդին բնորոշ հատկանիշ է:
բ) Մեր ժողովուրդը հաղթող ժողովուրդ է:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ցույց տալիս անորոշ դերբայը :

2. Ի՞նչ վերջավորություն ունի անորոշ դերբայը:

3. Հոլովվու՞մ է անորոշ դերբայը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ անորոշ դերբայը ցույց է տալիս գործողության ընդհանուր գաղափար:

2. Իմանա, որ անորոշ դերբայը ունի *-էլ* կամ *-ալ* վերջավորություն:

3. Իմանա, որ անորոշ դերբայը հոլովվում է՝ ենթարկվելով *ու* ոլովման:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տարբերակել անորոշ դերբայը .

խաղալ, խաղացող, խաղում

2. Պետք է կարողանա նախադասության մեջ գտնել անորոշ դերբայը.

Նստել անկարելի էր:

3.Պետք է կարողանա հոլովվել *խաղալ* բայը:

Դաս 41 –Ենթակայական դերբայ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ցույց տալիս ենթակայական դերբայը:

2. Ենթակայական դերբայով դիմավոր ձևեր կազմվու՞մ են:

3. Հոլովվու՞մ է ենթակայական դերբայը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ ենթակայական դերբայը ցույց է տալիս առարկայի մի բան անելը կամ լինելը:

2. Իմանա, որ ենթակայական դերբայով դիմավոր ձևեր չեն կազմվում:

3.Իմանա, որ գոյականաբար գործածվելիս ենթակայական դերբայը հոլովվում է *ի* հոլովմամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա ընտրել ենթակայական դերբայով դրված բառը.

սովորող, սովորելու, սովորում

2. Պետք է կարողանա նախադասության մեջ գտնել ենթակայական դերբայը.

Իր արհեստին ծուռ նայողը կուշտ չի ուտի:

3. Պետք է կարողանա հոլովվել *վազող* բայը:

Դաս 42 –Հարակատար դերբայ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է ցույց տալիս հարակատար դերբայը:

2.Հարակատար դերբայն ի՞նչ հարցերի է պատասխանում:

3.Ի՞նչ վերջավորություն ունի հարակատար դերբայը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ հարակատար դերբայը ցույց է տալիս առարկայի դրություն, վիճակ՝ որպես ավարտված գործողության հետևանք:

2.Իմանա, որ հարակատար դերբայը պատասխանում է ի՞նչ եղած հարցին:

3.Իմանա, որ հարակատար դերբայն ունի *ած, ացած, եցած* վերջավորությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա գտնել հարակատար դերբայը.

մրսած, արկած, հասարակած

2.Պետք է կարողանա որոշել *ի՞նչ արած* հարցին պատասխանող հարակատար դերբայը.

գտած, մոտեցած, գիտեցած

3.Պետք է կարողանա որոշել *ացած* վերջավորություն ունեցող հարակատար դերբայը.

խաղացած, հոդված, երազած

Դաս 43 –Համակատար դերբայ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է ցույց տալիս համակատար դերբայը։

2.Ինչպե՞ս է կազմվում համակատար դերբայը։

3.Ի՞նչ հարցերի է պատասխանում համակատար դերբայը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ համակատար դերբայը ցույց է տալիս ստորոգյալի կամ բայական այլ անդամի արտահայտած գործողությանը համընթաց գործողությունը։

2. Իմանա, որ համակատար դերբայը կազմվում է՝ անորոշ դերբային ավելացնելով *իս* վերջավորությունը։

Օր՝ Անորոշ դերբայ՝ *սովորել, երևալ*

Համակատար դերբայ՝ *սովորելիս, երևալիս*

3.Իմանա, որ համակատար դերբայը պատասխանում է ե՞րբ, ի՞նչ անելիս, ի՞նչ լինելիս հարցերին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա գտնել համակատար դերբայը.

հիշելիս, հիշել, երազած

2.Պետք է կարողանա տարբերակել համակատար դերբայը.

սեղանիս, վայելելիս

3.Պետք է կարողանա որոշել , թե *երբ* հարցին պատասխանող համակատար դերբայը նախադասության ի՞նչ անդամ է դառնում.

Փողոցն անցնելիս վայր ընկավ։

Դաս 44 – Անկատար դերբայ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է ցույց տալիս անկատար դերբայը։

2.Ի՞նչ վերջավորություն է ստանում անկատար դերբայը։

3.Դիմավոր ձևեր կազմու՞մ է անկատար դերբայը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ անկատար դերբայը ցույց է տալիս գործողությունը ընտացքի մեջ կամ կատարման վիճակում։

2.Իմանա, որ անկատար դերբայը ստանում է *-ում* վերջավորությունը։

3.Իմանա, որ անկատար դերբայն օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր և դառնում ստորոգյալ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա տարբերակել նախադասության մեջ անկատար դերբայը.

Քնքուշ երգերից հյուսում եմ մանյակ,

Որ պճնեմ սիրով պատկերդ սրտում։

2.Պետք է կարողանա ընդգծել անկատար դերբայը.

ա/ նստում է բ/ դիմում գ/ գրել

3.Պետք է կարողանա ընդգծել ստորոգյալը.

Անցած օրերի հուշերն եմ թերթում։

Դաս 45 –Վաղակատար դերբայ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ցույց տալիս վաղակատար դերբայը։
2. *Ե* և *ա* խոնարհման բայերը ի՞նչ վերջավորություն ունեն։
3. Վաղակատար դերբայը կազմու՞մ է դիմավոր ձևեր։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետքէիմանա.

1. Իմանա, որ վաղակատար դերբայը ցույցէտալիս գործողությունը կատարված, ավարտված վիճակում։

2. Իմանա, որ *ե* խոնարհման վաղակատարը ստանում է *էլ* վերջավորությունը, օր.՝բերել, շարել։

Ա խոնարհման վաղակատարը կազմվում է անորոշ դերբայի հիմքից՝*ացել* վերջավորությամբ, օր.՝աղալ-աղացել, հոգալ-հոգացել։

3. Իմանա, որ վաղակատար դերբայը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր և դառնում նախադասության մեջ ստորոգյալ։ Օր.՝

Նրանով է որոտացել

Կռվի երգն իմ ժողովրդի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա գտնել վաղակատար դերբայը.

ա/ ընթերցող բ/ վազել է գ/գնում է

2. Պետք է կարողանա որոշել, թե տրված բայերը որ խոնարհման են պատկանում.

արթնացել է, գտել է

3. Պետք է կարողանա նախադասության մեջ գտնել, թե վաղակատար դերբայը ի՞նչ անդամ է դարձել.

Դարձել է հու՛յս, դարձել դրո՛շ ,

Պահել երթը մեր անաղարտ…

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է ցույց տալիս ապակատար դերբայը:

2.Ինչպե՞ս է կազմվում ապակատար դերբայը:

3.Դիմավոր ձևեր կազմու՞մ է ապակատար դերբայը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ ապակատար դերբայը ցույց է տալիս գործողությունը չսկսված, կատարելի վիճակում:

2.Իմանա, որ ապակատար դերբայը կազմվում է՝ անորոշ դերբային ավելացնելով *ու* վերջավորությունը, օր.՝ վազելու, խաղալու:

3.Իմանա, որ ապակատար դերբայը օժանդակ բայի հետ կազմում է դիմավոր ձևեր և նախադասության մեջ դառնում է ստորոգյալ.

Օր.՝ Էլ չեմ խաղալու, գնալու եմ դպրոց:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա գտնել ապակատար դերբայը.

ա/վազելու է բ/վազել է գ/վազում է

2.Պետք է կարողանա որոշել, թե որն է ապակատար դերբայը.

որոշելու է որոշելու

3.Պետք է կարողանա նախադասության մեջ գտնել ապակատար դերբայը.

Երդու՛մ կեր, որ էլ չես խաբելու:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ցույց տալիս ժխտական դերբայը:

2. Ի՞նչ վերջավորություն են ստանում *ե* և *ա* խոնարհման բայերը:

3. Օժանդակ բայի հետ կազմու՞մ է դիմավոր ձևեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ ժխտական դերբայն արտահայտում է կատարելի գործողություն, որը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևերով:

2.Իմանա, որ *ե* խոնարհման բայերի ժխտական դերբայը կազմվում է՝ անորոշ դերբայի *ել* վերջավորությունը *ի* վերջավորությամբ փոխարինելով: Օր.՝ չեմ մանրի:

Ա խոնարհման բայերի ժխտական դերբայը կազմվում է անորոշ դերբայի վերջին *լ*-ն դուրս գցելով: Օր.՝ չեմ խաղա:

3.Իմանա, որ ժխտական դերբայը օժանդակ բայի ժխտական ձևի հետ կազմում է դիմավոր ձևեր և դառնում ստորոգյալ: Օր.՝ Ջուրն ընկնողը անձրևից չի վախենա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա գտնել ժխտական դերբայը.

ա/ *չեմ խաղա բ/խաղացել է գ/խաղում է*

2.Պետք է կարողանա որոշել՝ որն է *ե* խոնարհման, որն է *ա* խոնարհման բայը.

չի վախենա չի հիշի

3.Պետք է կարողանա նախադասության մեջ ընդգծել ժխտական դերբայը.

Ցամաք աղբյուրից ջուր չեն ուզի:

Դաս 48 –Բայի դիմավոր ձևեր Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ են ցույց տալիս բայի դիմավոր ձևերը:

2.Նախադասության մեջ ի՞նչ անդամ են դառնում:

3.Ի՞նչ հարցերի են պատասխանում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ գործողության կատարման եղանակ, ժամանակ, դեմք և թիվ ցույց տվող բայաձևերը կոչվում են բայի դիմավոր ձևեր:

2.Իմանա, որ դիմավոր ձևերը նախադասության մեջ դառնում են ստորոգյալ:

3.Իմանա, որ դիմավոր ձևերը պատասխանում են դիմավոր հարցերի՝ ի՞նչ արեցի, ի՞նչ ես անում, ի՞նչ կլինի, ի՞նչ է լինելու, ի՞նչ անեն և այլն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա ասել՝ որ ձևն է դիմավոր.

ա/ճանաչել եմք/քայլել գ/քայլող

2. Պետք է կարողանա նախադասության մեջ գտնել ստորոգյալները.

Լուսամփոփը հանկարծ շողաց,

և ես հանկարծ քեզ հիշեցի:

3. Պետք է կարողանա ասել՝ որ հարցն է դիմավոր ձևերի հարց.

Ի՞նչ են անելու, ի՞նչ անել, ի՞նչ անող:

Դաս 49 –Բայի դեմք Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Քանի՞ դեմք ունի բայը և ի՞նչ է ցույց տալիս առաջին դեմքը:

2. Ի՞նչ է ցույց տալիս երկրորդ դեմքը:

3 .Ի՞նչ է ցույց տալիս երրորդ դեմքը:

Հարցերինպատասխանելուկամառաջադրանքներըկատարելուհամարսովորողըպետքէ իմանա.

1 . Իմանա, որ բայն ունի 3 դեմք՝խոսողը (1-ին դեմք), խոսակիցը (2-րդ դեմք), և մեկ ուրիշը (3-րդ դեմք):

1-ին դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսողը:

Օր.՝Ես ատում եմ քո անունը:

2 . Իմանա, որ 2-րդ դեմքով խոսողը հաղորդում է իր խոսակցի գործողությունը:

Օր.՝Կոխոտի՛ընրանքայլերովքոլույս:

3 . Իմանա, որ3-րդ դեմքով խոսողը հաղորդում է ո՛չ իր և ո՛չ էլ խոսակցի, այլ մի երրորդ անձի կամ առարկայի գործողությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա ընդգծել 1-ին դեմքով դրված բայը.
   Տեսա երազ մի վառ:

2. Պետք է կարողանա ընդգծել 2-րդ դեմքով դրված բայը.

   Եվ դու ինչու՞ ինձ չես հարցնում,
   Թե քո անունն ինչ գույն ունի:

3. Պետք է կարողանա ընդգծել 3-րդ դեմքով դրված բայը.

Մարդը ձգտում է արտացոլել աշխարհը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Քանի՞ թիվ ունի բայը:

2.Ի՞նչ է ցույց տալիս եզակի թիվը:

3.Ի՞նչ է ցույց տալիս հոգնակի թիվը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ բայն ունի 2 թիվ՝ եզակի և հոգնակի:

2.Իմանա, որ եզակի թիվը ցույց է տալիս մեկ անձի կամ առարկայի գործողություն:

Օր.՝ Ձյունը առատությամբ նստել է տների կտուրներին:

3.Իմանա, որ հոգնակի թիվը ցույց է տալիս երկու և ավելի անձերի կամ առարկաների գործողություն:

Օր.՝ Գյուղի շրջապատն ու լեռները վաղուց են ճերմակել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա եզակի թվով դրված բայը դարձնել հոգնակի.

Վազում եմ, խաղում է

2.Պետք է կարողանա նախադասության մեջ ընդգծել եզակի թվով դրված բայը.

Նստել էինք պատշգամբում, իսկ գիշերը լսում էր մեր լռությունը:

3.Պետք է կարողանա ընդգծել հոգնակի թվով դրված բայը.

ա/խաղում էինք բ/լռում էր գ/խոսում ես

Դաս 51 –Բայի ժամանակը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Քանի ժամանակ ունի բայը և ի՞նչ է ցույց տալիս ներկա ժամանակը։

2.Ի՞նչ է ցույց տալիս անցյալ ժամանակը։

3.Ի՞նչ է ցույց տալիս ապառնի ժամանակը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բայն ունի երեք ժամանակ՝ներկա,անցյալ,ապառնի։

Ներկա ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է խոսելու պահին։

Օր.՝Աշնան քամու տակ անտառը կրկին նազում է շիկնած։

2. Անցյալ ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվել է խոսելու պահից առաջ.

Օր.՝Հինա էր դրել բարալիկ թխկին։

3. Ապառնի ժամանակը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվելու է խոսելո ւպահից հետո։

Օր.՝ Մա՛յր, աղաչում եմ, հանգցրու՛ կրակը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանանախադասությանմեջընդգծե՛լներկաժամանակիբայը.

Ատումեմմա՛հը, որհյուրէգալիսաղջկատեսին։

2. Պետք է կարողանա գտնել անցյալ ժամանակի բայը.

ա/ գրեց բ/կկարդա գ/խաղումէ

3. Կազմե՛լ ապառնի ժամանակի բայով մեկ նախադասություն։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Քանի՞ եղանակ ունի բայը:

2. Եղանակը բնորոշ է դիմավո՞ր, թե՞ անդեմ բայերին:

3. Որո՞նք են դիմավոր բայերի քերականական հատկանիշները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ բայն ունի հինգ եղանակ:

2.Իմանա, որ եղանակը բնորոշ է միայն դիմավոր բայերին:

3.Իմանա, որ դիմավոր բայերն ունեն դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, սեռ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա թվարկել բայի եղանակները:

2.Պետք է կարողանա նախադասությունների մեջ ընդգծել բայը, նշել բայի եղանակը.

ա/Ես կուզեի քեզ հետ կիսել

Վերջին պատառն իմ հացի:

բ/Մութը դառնում է գրատախտակի ջնջոց սպունգե,

Մինչդեռ երկինքը

Դանդա՛ղ պատվում է աստղաեղյամով:

3. Պետք է կարողանաընդգծել միայն դիմավոր բայերը.

ապրելու ենք, երգող, նստում է, գրելիս:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Խոնարհման քանի՞ձև ունեն բայերը։

2. Ի՞նչ խոնարհման են պատկանում –ել և -ալ վերջավորություններ ունեցող բայերը։

3. Նախադասության մեջ ի՞նչ պաշտոն են կատարում դիմավոր բայերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ բայերն ունեն երկու խոնարհում՝ ***Ե և Ա:***

2. Իմանա, որ ***-ել*** վերջավորություն ունեցող բայերը պատկանում են ***Ե*** խոնարհման, ***-ալ*** վերջավորություն ունեցողները՝ ***ա*** խոնարհման։

3. Իմանա, որ խոնարհված բայերը նախադասության մեջ դառնում են ստորոգյալ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա ընդգծել Ե խոնարհման բայերը մեկ գծով, ա խոնարհման բայերը՝ երկու գծով.

նստել, մոտենալ, խաղալ, պարել, խորհել:

2. Պետք է կարողանա առանձնացնել և տրված սյունակներում գրել պարզ և բաղադրյալ դիմավոր բայերը:

Գծում է, խոսեցի, մաքրել ենք, կջրեմ

ՊԱՐԶ	ԲԱՂԱԴՐՅԱԼ

3. Պետք է կարողանա ընդգծել տրված նախադասության դիմավոր բայը:

Գարնան արևը ժպտում է:

Դաս 54–Օժանդակ բայի խոնարհումը և ուղղագրությունը: Դրական և ժխտական խոնարհում

[Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Քանի՞ ժամանակ ունի ***եմ*** օժանդակ բայը:

2. Քանի՞ խոնարհում ունեն բայերը:

3.Ինչպե՞ս և ե՞րբ է հաստատական բայը դառնում ժխտական:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ օժանդակ բայերը խոնարհվում են երկու ժամանակով՝ ներկա և անցյալ:

2. Իմանա, որ բայերը խոնարհվում են երկու ձևով՝ դրական և ժխտական:

3. Իմանա, որ հաստատական բայերը դառնում են ժխտական, երբ բայի խոնարհման ձևերով ժխտվում կամ մերժվում է գործողությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա լրացնել օժանդակ բայերի բաց թողնված տառերը (է կամ ե):

-նք, -ր, -ինք, -մ

2. Պետք է կարողանա **վազում եմ և խաղում եմ** բայերը դարձնել ժխտական խոնարհման:

3. Պետք է կարողանա կազմել երկու նախադասություն, որտեղ կլինեն դրական և ժխտական խոնարհման բայեր:

Դաս 55 – Սահմանական եղանակ [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Քանի՞ ժամանակ ունի սահմանական եղանակը։

2.Քանի՞ ժամանակաձև ունի սահմանական եղանակը։

3. Սահմանական եղանակի ժամանակաձևերից քանի՞սն են պարզ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ սահմանական եղանակն ունի երեք ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի։

2. Իմանա, որ սահմանական եղանակն ունի յոթ ժամանակաձև։

3.Իմանա, որ ժամանակաձևերից միայն մեկն է կազմությամբ պարզ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա կազմել **երգել, խոսել, խաղալ** բայերի սահմանական եղանակի ներկա, անցյալ և ապառնի ձևերը։

2. Պետք է կարողանա նախադասության միջից գտնել և դուրս գրել սահմանական եղանակի բայերը, որոշել դրանց դեմքը, թիվը և ժամանակը.

Կայծակը չոր ճայթյունով բախվեց ժայռին, մի կողմ շպրտվեց և թաղվեց կանաչ գետնի մեջ։

3. Պետք է կարողանա ընդգծել անցյալ կատարյալ ժամանակաձևով դրված բայերը.

Երգում եմ, պարեցի, նկարել էր, թռչում է, դավաճանեց։

Դաս 56-Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Անկատար ներկա: Անկատար անցյալ: Կազմությունը, խոնարհումը: [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր ձևաբայով է կազմվում անկատար ներկա ժամանակաձևը:

2. Ինչպե՞ս են կազմվում անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը:

3. Անկատար անցյալով խոնարհված հաստատական բայերը ինչպե՞ս դարձնել ժխտական/նշի՛ր 1 օրինակ/:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ անկատար ներկան կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայերի ներկայի ձևերով:

2. Իմանա, որ անկատար ներկան կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, իսկ անկատար անցյալը՝ անկատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով:

3. Իմանա, որ ժխտականը կազմելիս չ մասնիկն ավելացվում է օժանդակ բային , որը դրվում է դերբայից առաջ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանանշել այն բայը, որը դրված է անկատար ներկա ժամանակաձևով:

ա)գոռացի բ) նվագում եմ գ) ապրելու եմ դ) սրբել եմ

2. Պետք է կարողանա թվարկել անցյալ ժամանակով խոնարհված օժանդակ բայերը:

3.Պետք է կարողանա տրված բայերը դարձնել ժխտական.

քաղում էի, մոռանում էին, շրջում էիր

Դաս 57- Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Վաղակատար ներկա: Վաղակատար անցյալ: Կազմությունը, խոնարհումը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչպե՞ս կարելի է հասկանալ,որ տրված բայը սահմանական եղանակի ժամանակաձևերից է, բե՛ր օրինակ:

2. Ինչպե՞ս է կազմվում այդ ժամանակաձևի ժխտականը, բե՛ր օրինակ:

3. Ինչպե՞ս որոշել տրված ժամանակաձևի դեմքը , թիվը, ժամանակը, բե՛ր օրինակ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ վաղակատար անցյալ ժամանակաձևը կազմվում է օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերի և ձևաբայի միջոցով, հետևաբար սահմանական եղանակի ժամանակաձև է, օրինակ՝երգե լձևաբայ + էօժանդակ բայ

2. Իմանա, որ պետք է հիշել , որ օժանդակբայովկազմվածժամանակաձևերիդեպքումչժխտականմասնիկըդրվումէօժանդակբայիվրա, եօժանդակբայընախորդումէձևաբային, օրինակ՝երգելեմ – չեմերգել:

3. Իմանա, որ սահմանականեղանակիայսժամանակաձևդեմքընթիվըորոշվումենօժանդակբայիօգնությամբ, օրինակ՝երգելեմ- **եմ-**ը 1-ինդեմք , եզակիթիվ:Այսժամանակաձևըմիշտանցյալժամանակէցույցտալիս:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանատրված բայերից առանձնացնել սահմանական եղանակի ժամանակաձևերը/ օրինակում տրվում են այլ եղանակի բայեր եւ սահմանական եղանակի վաղակատար անցյալ ու ներկա ժամանակաձևերի բայեր/.

Կգրի, լռեն, պիտիհասկանա, բերելէ , գնա՛, սիրելենք , չհասկանա, չհիշել, մտաբերելէի:

2. Պետք է կարողանակազմել տրված բայերի ժխտական խոնարհման ձևերը.

Հիշելեմ

Ստացելենք

Գնացելէիր

Եղելէր

Հակասելէ

3. Պետք է կարողանաորոշել տրված բայերի դեմքը, թիվը , ժամանակը.

Չինկարել

Բացելենք

Հիշելէիր

Վազել էինք

Գնացել եմ

Դաս 58 - Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Անցյալ ապակատար: Անցյալ կատարյալ: Կազմությունը, խոնարհումը: [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ հարցի է պատասխանում անցյալ կատարյալը :

2. Ի՞նչ ժամանակ է ցույց տալիս անցյալ կատարյալը:

3. Ինչպե՞ս է կազմվում անցյալ ապակատար ժամանակաձևը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ անցյալ կատարյալը պատասխանում է ***ի՞նչ արեցի*** հարցին:

2. Իմանա, որ անցյալ կատարյալը ցույց է տալիս անցյալ ժամանակ, մի անցյալ ժամանակակետում սկսված և ավարտված գործողություն:

3. Իմանա, որ անցյալ ապակատար ժամանակաձևը կազմվում է ապակատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանակազմել 1 նախադասություն, որի գործողությունն ավարտված է:

2. Պետք է կարողանա**բարձրանալ, փախչել** բայերը խոնարհել անցյալ անակատար ժամանակաձևով:

3. Պետք է կարողանակազմել **ձգել, բարձրացնել** բայերի անցյալ ապակատար ժամանակաձևերը, դրանք գործածել նախադասությունների մեջ:

Դաս 59- Սահմանական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Սահմանական ապառնի: Կազմությունը, խոնարհումը: [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ կազմություն ունի սահմանական ապառնին:

2. Ի՞նչ է ցույց տալիս սահմանական ապառնին:

3. Ի՞նչ կազմություն ունի սահմանական ապառնու ժխտական ձևը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ սահմանական ապառնին կազմվում է ապակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով:

2. Իմանա, որ սահմանական ապառնին ցույց է տալիս խոսելու պահից հետո կատարելի գործողություն:

3. Իմանա, որ սահմանական ապառնու ձևերի ժխտականը կազմելիս չ մասնիկն ավելացվում է օժանդակ բային, որը դրվում է դերբայից առաջ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանակազմել **ժպտալ** բայի սահմանական ապառնի ձևը:

2. Պետք է կարողանա**պատասխանել** բայը սահմանական ապառնու ժխտական ձևով գործածել նախադասության մեջ:

3. Պետք է կարողանաառանձնացնել սահմանական ապառնի ժամանակաձևով դրված բայը.

ա)երգելու եմ բ)վազեց գ)խաղում են

Դաս 60 - Հարակատար դերբայով կազմված ժամանակային ձևեր: Կրկնություն

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ վերջավորություն ունի հարակատար դերբայը:

2.Հարակատարը անկա՞խ, թե՞ կախյալ դերբայ է:

4.Քանի՞ թիվ ունի բայը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ հարակատար դերբայն ունի ***ած, ացած, էցած*** վերջավորությունը:

2.Իմանա, որ հարակատար դերբայն անկախ դերբայներից մեկն է:

3. Իմանա, որ ոչ բոլոր բայերը կարող են ունենալ հարակատար դերբայով և օժանդակ բայով կազմված ձևեր:

4.Իմանա, որ բայն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա տարբերել հարակատար դերբայով դրված բայերը:

2.Պետք է կարողանա օժանդակ բայի խոնարհված ձևերով և հարակատար դերբայով կազմել ժամանակային ձևեր:

3.Պետք է կարողանա հարակատար դերբայի դիմավոր ձևերով կազմել նախադասություն:

4. Պետք է կարողանանշել այն տարբերակը, որտեղ կա հարակատար դիմավոր ձև:

ա)սրբում էր բ)կառուցելու էր գ) կանգնած էր դ)գործում էր

5 Պետք է կարողանա տրված եզակի թվով դրված դրված բայերը դարձնել հոգնակի, իսկ հոգնակի թվով դրվածները՝ եզակի.

ա/

Եզակի թիվ	Հոգնակի թիվ
Մտածել եմ	
Սովորում էի	
վառեց	

բ/

Հոգնակի թիվ	**Եզակի թիվ**
Կատարելու էինք	
Մրցեցինք	
Նկարել ենք	

Դաս 61 - Ըղձական եղանակ, ըղձական ապառնի, դրական և ժխտական խոնարհում

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ըղձական եղանակը քանի՞ ժամանակաձև ունի:

2. Ըղձական եղանակի ժամանակաձևերը պա՞րզ են, թե՞ բաղադրյալ:

3. Ինչպե՞ս են կազմվում ըղձական ապառնու ժխտական ձևերը /Բե՛ր օրինակ:/

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ ըղձական եղանակն ունի երկու ժամանակ՝ ըղձական ապառնի և ըղձական անցյալ:

2. Իմանա, որ ըղձական եղանակի բայերը կազմությամբ պարզ են:

3. Իմանա, որ ըղձական ապառնու ժխտական ձևերը կազմվում են Չ մասնիկով, որը դրվում է բայաձևի սկզբից: Օր.՝ նկարեմ-չնկարեմ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա ***սովորել*** բայը դնել ըղձական ապառնի ժամանակաձևով և կազմել մեկ նախադասություն:

2. Պետք է կարողանա առանձնացնել և տրված սյունակներում գրել ըղձական ապառնի ժամանակաձևերով դրված բայերը:

Խաղայի, նկարենք, մրսել ենք, լողա

Ե խոնարհման բայեր	Ա խոնարհման բայեր

3. Պետք է կարողանա ըղձական ապառնու դրական և ժխտական ժամանակաձևերով խոնարհել ***աշխատել*** բայը:

Դաս 62– Ըղձական եղանակ: Ըղձական անցյալ: Ըղձական եղանակի բայաձևերի ուղղագրությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է ցույց տալիս ըղձական անցյալը:

2. Ըղձական անցյալի կազմության ժամանակ ի՞նչ վերջավորություն են ստանում Ե խոնարհման բայերը:

3. Ըղձական անցյալի կազմության ժամանակ ի՞նչ վերջավորություն են ստանում Ա խոնարհման բայերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ ըղձական անցյալը ցույց է տալիս անցյալում կատարելի իղձ, ցանկություն:

2.Իմանա, որ **Ե** խոնարհման բայերը ստանում են ***–ելի, -ելիր, -ելր, -ելինք, -ելիք, -ելին*** վերջավորությունները:

3.Իմանա, որ **Ա** խոնարհման բայերը ստանում են ***–այի, -այիր, -ար, -այինք, -այիք, -ային*** վերջավորությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա ***թռչել, ջրել*** բայերի ըղձական անցյալ ժամանակաձևերով կազմել նախադասություններ:

2. Պետք է կարողանաառանձնացնել և տրված սյունակներում դուրս գրել ըղձական անցյալ ժամանակաձևերով դրված բայերը:

գծեմ, խոսեի, մաքրեմ, գայի, հասնեիր, խաղայիր,

Ե խոնարհման բայեր	Ա խոնարհման բայեր

3.Պետք է կարողանա ըղձական անցյալ ժամանակաձևով դրված հետևյալ բայերում գրել **յ** տառը (որտեղ անհրաժեշտ է):

իմանա-ի, սիրե-ի, տեսնե-ի, գոռա-ի, մոտենա-ի, գրե-ի, վազե-ի

Դաս 63 - Ենթադրական եղանակ: Ենթադրական ապառնի. դրական և ժխտական խոնարհում
[Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ենթադրական եղանակը քանի՞ ժամանակաձև ունի:

2.Ի՞նչ մասնիկով է կազմվում ենթադրական եղանակը:

3.Ինչպե՞ս են կազմվում ենթադրական ապառնու ժխտական ձևերը /Բե՛ր օրինակ:/

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ ենթադրական եղանակն ունի երկու ժամանակաձև՝ ենթադրական ապառնի և ենթադրական անցյալ:

2.Իմանա, որ ենթադրական ապառնին կազմվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակի ձևերից՝ **կ** մասնիկով:

3. Իմանա, որ ենթադրական ապառնու ժխտական ձևերը կազմվում են ժխտական դերբայով և օժանդակ բայի ներկայի օժանդակ ձևերով: Օր.՝ կջրեմ-չեմ ջրի

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանակազմել տրված բայերի ենթադրական ապառնի ժամանակաձևերը.

Սովորեի, խոսեիք, երազեիր, մրսեի

2. Պետք է կարողանատրված բայերից ընտրե՛լ այն տարբերակը, որը դրված է ենթադրական ապառնի ժամանակաձևով:

ա) լռում է բ)նստեցի գ)կսիրեմ դ)նկարել եմ

3. Պետք է կարողանաենթադրական ապառնի ժամանակաձով խոնարհել **ջրե**լ բայը /դրական և ժխտական խոնարհում:

Դաս 64 - Ենթադրական եղանակ: Ենթադրական անցյալ. դրական և ժխտական խոնարհում
Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է ցույց տալիս ենթադրական անցյալը:

2.Ինչպե՞ս է կազմվում ենթադրական անցյալը:

3. Ինչպես են կազմվում ենթադրական անցյալի ժխտական ձևերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ ենթադրական անցյալը ցույց է տալիս պայմանով, երբեմն էլ ենթադրաբար կատարելի գործողություն մի անցյալ ժամանակում:

2.Իմանա, որ ենթադրական անցյալը կազմվում է ըղձական եղանակի անցյալ ժամանակի ձևերից՝ Կ եղանակիչով:

3. Իմանա, որ ենթադրական անցյալի ժխտական ձևերը կազմվում են ժխտական դերբայով և օժանդակ բայի անցյալի ժխտական ձևերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա կազմել տրված բայերի ենթադրական անցյալի ժամանակաձևերը.

Գրեի, վազեիք, թաքցնեիր, խնամեի:

2. Պետք է կարողանա առանձնացնել ենթադրական անցյալ ժամանակաձևերով դրված բայերը:

3. Պետք է կարողանա ենթադրակաան անցյալ ժամանակաձևով խոնարհել պարել բայը /դրական և ժխտական խոնարհում/:

Դաս 65 – Հարկադրական եղանակ: Հարկադրական ապառնի: Կազմությունը, խոնարհումը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Հարկադրական եղանակը քանի՞ ժամանակաձև ունի:

2.Ի՞նչ մասնիկներով է կազմվում հարկադրական ապառին:

3. Ինչպե՞ս են կազմվում հարկադրական ապառնու ժխտական ձևերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ հարկադրական եղանակն ունի 2 ժամանակ՝ հարկադրական ապառնի և հարկադրական անցյալ:

2.Իմանա, որ հարկադրական ապառնին կազմվում է պիտի կամ պետք է եղանակիչներով: Դրանք դրվում են խոնարհվող բայից առաջ և գրվում անջատ:

3. Իմանա, որ հարկադրական ապառնու ժխտական ձևերը կազմելիս չ մասնիկը դրվում եղանակիչի սկզբում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա երգել բայը դնել հարկադրական ապառնի ժամանակաձևով:

2. Պետք է կարողանա ընդգծել հարկադրական ապառնի ժամանակաձևով դրված բայերը.

Պիտի ժպտան, պիտի գոչեմ, երգեցի, կգամ

3.Պետք է կարողանա բերել բայը խոնարհել հարկադրական ապառնի ժամանակաձևի դրական և ժխտական ձևերով:

Դաս 66 – Հարկադրական եղանակի ժամանակներն ու ժամանակաձևերը: Հարկադրական անցյալ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է ցույց տալիս հարկադրական անցյալը:

2.Ինչպե՞ս է կազմվում հարկադրական անցյալը:

3. Ի՞նչ կազմություն ունեն հարկադրական անցյալի ժխտական ձևերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ հարկադրական անցյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակում հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի գործողություն:

2. Իմանա, որ հարկադրական անցյալը կազմվում է ըղձական անցյալի ձևերին պիտի կամ պետք է եղանակիչն ավելացնեով:

3. Իմանա, որ հարկադրական անցյալի ժխտական ձևերը կազմելիս չ մասնիկը դրվում է եղանակիչի սկզբից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա քայլել, ապրել բայերի հարկադրական անցյալ ժամանակաձևերով կազմել նախադասություններ:

2. Պետք է կարողանա առանձնացնել հարկադրական անցյալ ժամանակաձևերով դրված բայերը.

Պիտի կանգնեինք, պիտի լռեին, կանգնեցրինք, լռեց:

3. Պետք է կարողանա որսալ բայը խոնարհել հարկադրական անցյալի դրական և ժխտական ձևերով:

Դաս 67 – Հրամայական եղանակ: Կազմությունը, խոնարհումը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է ցույց տալիս հրամայական եղանակը:

2.Ինչպե՞ս է կազմվում Ե խոնարհման բայերի հրամայականը:

3. Ինչպե՞ս է կազմվում Ա խոնարհման բայերի հրամայականը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Պետք է իմանա, որ հրամայական եղանակը ցույց է տալիս հրաման, խնդրանք, կոչ, հորդոր:

2.Իմանա, որ Ե խոնարհման եզակի հրամայականը կազմվում է բայահիմքին ավելացնելով

–իր վերջավորությունը, իսկ հոգնակի հրամայականը կազմվում է –եցեք վերջավորությունն ավելացնելով:

3. Իմանա, որ Ա խոնարհման եզակի հրամայականը կազմվում է.

ա/ պարզ բայերի դեպքում բայարմատին ավելացնելով ա /օրինակ՝ խաղա՛, հոգա՛/

բ/ ածանցավոր բայերի դեպքում՝ ու վերջավորությունը /օրինակ՝ մեծացնել-մեծացրո՛ւ/

Հրամայական եղանակի հոգնակին Ա խոնարհման բայերի դեպքում կազմվում է՝ ավելացնելով –ացեք վերջավորությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա տրված նախադասության մեջ ընդգծել հրամայական եղանակի բայերը.

Շողա՛ մռայլում, ըղձալի եզերք,

Որոտա՛, շաչի՛ր, փոթորկավետ ամպ:

2.Պետք է կարողանա գտնել հրամայական եղանակով դրված ե խոնարհման բայերը.

Գրկի՛ր իմ հոգին մարտի ցնծությամբ,

Բորբոքիր սիրտս, ազատության երգ:

3.Պետք է կարողանա նշել Ա խոնարհման հրամայական եղանակի բայերը.

Լսի՛ր, ընդունի՛ր, լողա՛, գրեցե՛ք

Դաս 68 – Հրամայական եղանակի ժամանակներն ու ժամանակաձերը [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ ժամանակ ունի հրամայական եղանակը:

2.Քանի՞ դեմք ունի հրամայական եղանակը:

3. Ինչպե՞ս է կազմվում հրամայական եղանակի ժխտական ձևը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ հրամայական եղանակն ունի միայն ապառնի ձև:

2. Իմանա, որ հրամայական եղանակն ունի միայն երկրորդ դեմք:

3.Իմանա, որ հրամայական եղանակի ժխտական ձևը կազմվում է մի՛ ժխտական մասնիկով, որը կոչվում է արգելական մասնիկ: Ժխտական հրամայականն անվանվում է արգելական հրամայական:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա վազել բայը դնել հրամայական եղանակով:

2. Պետք է կարողանա նախադասության մեջ գտնել հրամայական եղանակի բայը.

Ազատե՛ք հայոց գերիներին, թող գնան իրենց տները և սրբեն ազգականների արտասուքը:

3. Պետք է կարողանա կազմել տրված բայերի արգելական հրամայականը.

Մաքրել, գրել, խաղալ:

Դաս 69 – Անկանոն և պակասավոր բայեր Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Որո՞նք են պակասավոր բայերը։

2. Ո՞ր բայերն ենք համարում անկանոն։

3. Ի՞նչ անկանոնություն են դրսևորում *գալ* , *լալ, տալ* , *անել* , *դնել* , *տանել, ասել, լինել* , *դառնալ, ուտել* բայերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ պակասավոր են *եմ* , *կամ, գիտեմ* , *ունեմ* , *արժեմ* բայերը / այսքանը իմանա բավարար է/, դրանք ունեն միայն սահմանական ներկա և անկատար անցյալ ժամակաձևերը։

2. Իմանա, որ անկանոն են համարվում այն բայերը , որոնք եղանակային այս կամ այն ձևը կազմելիս շեղվում են խոնարհման հարացույցից։

3. Իմանա, թե ինչպիսի անկանոնություն են դրսևորում վերևում նշված բայերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա կազմել պակասավոր բայերի սահմանական ներկա և անկատար անցյալ ժամակաձևերը։

2. Պետք է կարողանա համեմատել լինել և գրել բառերի կատարյալի հիմքից կազմվող ձևերը, ցույց տալ անկանոնությունը։

3. Պետք է կարողանա տրված բայերից առանձնացնել անկանոն բայերը , նշել , թե ինչու են անկանոն.

գրում եմ , *գալիս է* , *սիրել էինք, դրեցինք, արել է* , *տարավ, հիշեց, գտավ, եղել եմ* , *դարձանք, կերել է* , *հրել է*

Դաս 70 – Խոսքի ոճերը: Գեղարվեստական ոճ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Որո՞նք են գեղարվեստական ոճի հիմնական առանձնահատկությունները:

2. Ինչպե՞ս է դրսևորվում գեղարվեստական խոսքը:

3.Ինչպե՞ս տարբերել գեղարվեստական ոճի տեքստը գիտականից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա գեղարվեստական խոսքի հատկանիշներից պատկերավորությունը, նշի , որ հեղինակը կիրառում է փոխաբերություն , մակդիր , համեմատություն և այլն:

2. Իմանա, որ գեղարվեստական խոսքը լինում է արձակ և չափածո:

3. Իմանա, որ գեղարվեստական խոսքը պատկերավոր է , հեղինակը կարող է կիրառել փոխաբերություններ , իսկ գիտական խոսքում դա բացառվում է: Կարող է կիրառվել առօրյա-խոսակցական , բարբառային բառապաշար հերոսների խոսքում , իսկ գիտական տեքստը շարադրվում է բացառապես գրական լեզվով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա տեքստում գտնել պատկերավորման միջոցները ՝ ցույց տալով , որ տեքստը գեղարվեստական ոճի է:

Կենսուրախ արևից քարերը տաքանում են, և երբ մռայլաղեմ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում ծեր քարին: Առավոտյան խաղաղ ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ:

2. Պետք է կարողանա տարբերել արձակ և չափածո տեքստերը:

3. Պետք է կարողանա նշել, թե տրված տեքստերից որն է գեղարվեստական ոճի:

Ա. Ահասարսուռ ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, ինչպես բարկացած իշխան, քերում է ափերը և հոկում հունի կապույտ որձաքարը: Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը փայլուն մաշկով օձի պես:

Բ. Շիշկերտ գյուղը շրջապատված է խիտ անտառներով, որտեղից սկիզբ է առնում Բասուտա գետը, որը հոսում է Ծավ - Հանդ գյուղերով, հասնում է մինչև ադրբեջանական տարածքները և թափվում է Արաքս գետը:

Դաս 71– Մակդիր Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է մակդիրը

2. Ինչպե՞ս տարբերել մակդիրը հատկանիշ ցույց տվող այլ բառերից

3. Ո՞ր ոճի տեքստերում է կիրառվում մակդիրը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ մակդիրը առարկայի կամ գործողության հատկանիշ ցույց տվող բառ է, որն ունի փոխաբերական իմաստ։

2. Իմանա, որ ի տարբերություն սովորական որոշչի ու ձևի պարագայի՝ մակդիրն ունի փոխաբերական իմաստ, ինչով էլ տարբերվում է դրանցից։

3. Իմանա, որ մակդիրը կիրառվում է գեղարվեստական խոսքում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա առանձնացնել այն կապակցությունները , որոնցում հատկանիշ ցույց տվող բառը մակդիր է։

Ծանր պարկ , ծանր բնավորություն, ծանր հիվանդություն, լուռ կանգնել , լուռ հայացք, խոր փոս, խոր աչքեր, ոսկե ձեռքեր, ոսկե ապարանջան, ոսկե մատներ, կապույտ ծով , կապույտ երկինք, կապույտ երազ։

2. Պետք է կարողանա տեքստից դուրս գրել մակդիրները.

Կենսուրախ արևից քարերը տաքանում են, և երբ մռայլադեմ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում ծեր քարին։ Առավոտյան խաղաղ ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգվում է կապույտ երիզի նման և հալվում ամպերի մեջ։

3. Պետք է կարողանա նշել, թե տրված տեքստերից որո՞ւմ կարելի է գետ բառին ավելացնել զայրացած մակդիրը։

Ա. Ահասարսուռ ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, ինչպես բարկացած իշխան, քերում է ափերը և հոկում հունի կապույտ որձաքարը։ Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը փայլուն մաշկով օձի պես։

Բ. Շիշկերտ գյուղը շրջապատված է խիտ անտառներով, որտեղից սկիզբ է առնում Բասուտա գետը, որը հոսում է Ծավ - Հանդ գյուղերով, հասնում է մինչև ադրբեջանական տարածքները և թափվում է Արաքս գետը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Որո՞նք են պաշտոնական ոճի 3 կարևոր առանձնահատկությունները

2. Ե՞րբ է կիառվում պաշտոնական ոճը

3. Ի՞նչ դրսևորում ունի պաշտոնական ոճը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ պաշտոնական ոճի տեքստերը գրվում են բացառապես գրական լեզվով, դրանց բնորոշ է սեղմությունն ու կաղապարայնությունը, բացակայում է հուզականությունը։

2. Իմանա, որ պաշտոնական ոճը կիրառվում է պետական–պաշտոնական, գրասենյակային, իրավաբանական և այլ ոլորտներում։

3. Իմանա, որ պաշոնական ոճը դրսևորվում է և՛ բանավոր և՛ գրավոր։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա տրված հատկանիշներից առանձնացնել նրանք , որոնք բնորոշ են պաշտոնական ոճին.

1. Պատկերավոր է , բնորոշ է բառի փոխաբերական իմքաստով կիրառությունը։

2. Գրվում է բացառապես գրական լեզվով։

3. Բնորոշ են գիտաբառերը։

4. Բնորոշ է սեղմությունն ու կաղապարայնությունը։

5. Բնորոշ է հեղինակի անհատականության դրսևորումը։

6. Բացակայում է հուզականությունը։

2 . Պետք է կարողանա թվարկել այն ոլորտները, որտեղ կիրառվում է պաշտոնական ոճը։

3 . Պետք է կարողանա կազմել պաշտոնական ոճով տեքստ՝ գրավոր կամ բանավոր։

Դաս 73 – Տեքստ: Տեղեկատվական տեքստ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է տեքստը:

2.Ի՞նչ է տեղեկատվական տեքստը:

3. Ի՞նչ ծավալի են լինում տեքստերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ իմաստով և քերականորեն միահյուսված խոսքային միավորների ամբողջությունը կոչվում է տեքստ:

2. Իմանա, որ այն բոլոր տեքստերը, որոնք իրենց հիմքում պարունակում են տեղեկություն, կոչվում են տեղեկատվական տեքստեր:

3. Իմանա, որ տեքստի ծավալները կարող են տարբեր լինել՝ մեկ նախադասությունից մինչև ամբողջական պարբերություն ու մի քանի պարբերություններ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պետք է կարողանա ասել տեքստի տեսակներից 1-2-ը:

2. Պետք է կարողանա բերել տեղեկատվական տեքստի 2-3 օրինակ:

3. Պետք է կարողանա կազմել տեղեկատվական տեքստ:

Դաս 74 –Գործնական գրություններ: Հայտարարություն, գովազդ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Որտե՞ղ են հանդիպում հայտարարության տեքստեր:

2.Ինչո՞վ են տարբերվում իրարից հայտարարությունն ու գովազդը:

3. Ո՞րն է գովազդի ամենակարևոր բաղկացուցիչ մասը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմանա, որ հայտարարությունը կարող է հեռարձակվել եթերով, հնչել ռադիոյով, տպագրվել մամուլում:

2. Իմանա, որ հայտարարությունը ընդամենը տեղեկացնում է, իսկ գովազդը և՛ տեղեկացնում է, և՛ առաջարկում ծառայություններ և ապրանքներ՝ գովազդելով դրանց հատկությունները:

3. Իմանա, որ գովազդի ամենակարևոր բաղկացուցիչ մասը սեղմ, ճիշտ և համոզիչ տեքստն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պետք է կարողանա գրել հայտարարություն դպրոցում կազմակերպվող միջոցառման մասին:

2. Պետք է կարողանա ներկայացնել և գովազդել իր այգու մրգերը:

3. Պետք է կարողանա տարբերել գովազդային և հայտարարությունների տեքստերը:

Դաս 75– Անձնական և պաշտոնական նամակներ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Քանի՞ տեսակ են լինում նամակները ըստ բովանդակության:

2.Տեքստի ո՞ր տեսակին է պատկանում նամակը:

3. Ո՞ւմ են ուղղված պաշտոնական նամակները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Իմանա, որ նամակներն իրենց բովանդակությամբ լինում են անձնական և պաշտոնական, տեղեկատվական և շնորհավորական:

2. Իմանա, որ նամակը տեղեկատվական տեքստի օրինակ է:

3. Իմանա, որ պաշտոնական նամակը գործնական գրության մի դրսևորում է, որով հաղորդակցվում են, թե՛ պաշտոնական անձինք, թե՛ հիմնարկ-ձեռնարկությունները, թե՛ կազմակերպությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա նամակ գրել ընկերոջը:

2. Կարողանա տարբերել պաշտոնական և անձնական նամաները:

3. Կարողանա վերարտադրել տրված նամակի բովանդակությունը բանավոր.

Հովհաննես Թումանյան. նամակ կնոջը՝ Օլգային

Օլա ջան, Չեմ կարող չխոստովանիլ, որ շատ ձանձրալի են ինձ համար այս օրերը, չնայելով, որ, իհարկե, միայնակ չեմ բոլորովին, ինչքա՜ն երկար են թվում ինձ այս ժամերը, այժմ ես զգում եմ հատկապես, որ ոչ ոք չէ կարող փոխարինել քեզ ինձ համար. զարմանալի բան, երազի նման եմ հիշում քո այստեղ եղած ժամերը: Զգալի է դառնում ինձ համար քո բացակայությունը, մանավանդ, երբ վերադառնում եմ կոնսիստորիայից կամ երեկոյան տուն եմ գալիս:

Բարևիր մեր կողմից Մուշեղին, հայրիկին, մայրիկին, Գիգոլին և Կատոյին: Շաքարն այստեղ է և խնդրում է, որ մեզ համար թեյ բերելիս իրան համար էլ մի երկու գրվանքա բերեք:

Գրիր, թե երբ եք գալու, որ գամ երկաթուղու կայարանը: Արդեն բոլորը քնած են, (ժամը 11½ է) ես եմ միայն, որ արթուն եմ և նամակ եմ գրում ահա:

Քո Հովհաննես Թումանյան Հ. Գ. Օլա ջան, մոռացա գրելու, որ անցյալ գիշեր երազում քեզ տեսա. թե ինչպես, ինչ դրության՝ ափսոս մոռացել եմ:

31 հոկտեմբերի 1889 ամի, ի Տփխիս